

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

3-4.96



ՀԱՆՈՒՆ ԽԱՐԱՊԻԹՅԱՆ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ



Դայաստանի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը
և Հունաստանի վարչապետ Կոստաս Սիմիտիսը
Դայաստանի և Հունաստանի միջև համաձայնության, բարեկամության
և համագործակցության մասին պայմանագրի ստորագրումից հետո



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՈՍՈՒՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Լուս է տեսնում 1995 թվականից
տարին չորս անգամ

3-4.1996

Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն
Կ Ո Լ Ե Գ Ի Ա

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ո Ա Զ Մ Ա Կ Ա Ն Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ծիրխանյան Վ. Գ. (նախագահ)	Ա. Հ. Գարամանուկյան, Հայկական լեզենը պատմական, իրավական ու քաղաքական հարցերու լուսան տակ	5
Քորանջյան Հ. Ս. (գլխավոր խմբագիր)	Ռ. Օ. Մահակյան, Մարտական գործողությունն ները 1914 թ. Կովկասյան ռազմաճակատում. Սարի- դամիշյան օպերայիան	13
Աբրահամյան Մ. Ա. Ավետիսյան Մ. Վ. Գորդիենկո Ի. Վ.	Ո Ա Զ Մ Ա Կ Ա Ն Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն. Ո Ա Զ Մ Ա Վ Ա Ր Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Զ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր	
Խորխորունի Վ. Վ. Կարապետյան Լ. Ա. Հայրապետյան Վ. Ա.	L. Գ. Իվաշով (ՈՒ), Համագործակցության ան- վտանգությունը. հիմնահարցեր և հեռանկարներ . . .	39
Հարությունյան Ա. Թ. Հարությունյան Գ. Բ. Հարությունյան Մ. Հ.	Ռ. Փիտերս (ԱՄՆ), Ապագա հակամարտությունն երի կուլտուրան	45
Մարտիրոսյ Լ. Ա. Շահսուկարյան Ս. Ն. Պալյան Հ. Ա.	ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ	
Պետրոսյան Ա. Ա. Պետրոսյան Գ. Լ. Սարգսյան Ա. Գ. Սարգսյան Ա. Ե. Սարգսյան Մ. Մ.	Գ. Բ. Հարությունյան, Հայաստանի Հանրապե- տության վիսված ուժերում տարվող դաստիարակ- չական աշխատանքի համակարգը և բարելավման ուղիները	75
Տեր-Գրիգորյանց Ն. Գ. Տեր-Թադևոսյ Ա. Ի.	ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՑՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ	
Գ. Ա. Աբրահամյան, Մարտական գործողությունն ները հետքաշման ժամանակ. ընկճվածության և խուճապի դեմ պայքարի մեթոդները	86	
	Ո Ա Զ Մ Ա Կ Ա Ն ՄԱՐՏԱՐԱԳԻՑՈՒԹՅՈՒՆ	
Ռ. Խ. Գրիգորյան, Զորքերի կառավարման ժա- մանակ որոշումների ընդունման մաթեմատիկա- կան մոդելավորման հիմնական հարցերը	97	
	Ո Ա Զ Մ Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն Տ Ե Ր Մ Ի Ն Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն	
Վ. Խ. Բաղդասարյան, Համարի բառարան	109	

«АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)

ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ

МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

№ 3-4, 1996

Издается 4 раза в год

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

В. Г. Ширханян (председатель); Г. С. Котанджян (главный редактор);

М. А. Абрамян; М. В. Аветисян; В. А. Айрапетян; А. В. Ароян; А. Т. Арутюнян;

Г. Б. Арутюнян; М. А. Арутюнян; И. В. Гордженко; Л. С. Карапетян; Л. А. Мартirosов;
О. С. Палян; А. А. Петросян; Г. Л. Петросян; А. Г. Саркисян; А. Е. Саркисян; М. С. Саркисян;
Н. Г. Тер-Григорянц; Л. И. Тер-Татевосов; В. В. Хорхоруни; С. Н. Шахсуварян.

НАУЧНОЕ КОНСУЛЬТИРОВАНИЕ И РЕДАКТИРОВАНИЕ

генерал-майор М. А. Абрамян; подполковник, д. мед. н., профессор Б. Н. Арутюнян;
лейтенант, к. филос. н., доцент С. Г. Арутюнян; к. филос. н., доцент В. Х. Багдасарян;

подполковник, д. ист. н., профессор Б. П. Балаян;

полковник, д. полит. наук, академик АВН (г. Москва) Г. С. Котанджян;

генерал-майор С. С. Мартirosian; д. ист. н., проф. Р. Г. Саакян,

майор, д. тех. н., академик АВН (г. Москва) А. Е. Саркисян;

генерал-лейтенант Н. Г. Тер-Григорянц.

СОДЕРЖАНИЕ

ВОЕННАЯ ИСТОРИЯ

А. А. Гараманукиан. Армянский легион в свете исторических, право- вых и политических вопросов	5 (30)*
Р. О. Саакян. Боевые действия на Кавказском фронте в 1914 г. Са- рыкамышская операция	13 (32)

ВОЕННАЯ ПОЛИТИКА. СТРАТЕГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

Л. Г. Ивашов (РФ). Безопасность Содружества: проблемы и перспекти- тивы	39 (57)
Р. Питерс (США). Культура будущих конфликтов	45 (62)

ВОЕННАЯ ПСИХОЛОГИЯ И ПЕДАГОГИКА

Г. Б. Арутюнян. Система воспитательной работы в ВС РА и пути ее улучшения	75 (82)
--	---------

БОЕВАЯ ПОДГОТОВКА

Г. С. Абрамян. Боевые действия при отходе. Методы борьбы против подавленности и паники	86 (94)
---	---------

ВОЕННАЯ ИНЖЕНЕРИЯ

Р. Х. Григорян. Основные вопросы математического моделирования принятия решений при управлении войсками	97 (104)
--	----------

ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ

В. Х. Багдасарян. Словарь номера	109
--	-----

* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается резюме на русском языке.

«HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)

MILITARY-SCIENTIFIC JOURNAL
OF THE MINISTRY OF DEFENCE OF THE REPUBLIC OF ARMENIA
N 3-4, 1996
Is published 4 times a year

EDITORIAL BOARD

V. G. Shirkanian (Chairman), H. S. Kotanjian (Editor-in-Chief),
M. A. Abrahamian, M. V. Avetisian, I. V. Gordienko, V. A. Hairepetian, H. V. Haroyan,
A. T. Haroutunian, G. B. Haroutunian, M. H. Haroutunian, L. S. Karapetian; V. V. Khorkhoruny,
L. A. Martirosov, H. S. Palian; A. A. Petrosian, G. L. Petrosian, A. E. Sarkisian,
A. G. Sarkisian, M. S. Sarkisian, S. N. Shahsouvarian, N. G. Ter-Grigorian, A. I. Ter-Tatevosov.

SCIENTIFIC CONSULTING AND EDITTING

M. A. Abrahamian, Major-General; V. Kh. Baghdasarian, Ass.-Prof., Ph. D. (Philosophy);
B. P. Balyan, Lieutenant-Colonel, Prof., Dr. of Hist. Sc.; B. N. Haroutunian, Lieutenant-Colonel,
Prof., Dr. of Medicine; S. H. Haroutunian, Lieutenant, Ass.-Prof., Ph. D. (Philosophy);
H. S. Kotanjian, Colonel, Dr. of Polit. Sc., Academician of AMSc (Moscow);
S. S. Martirosian, Major-General; R. G. Sahakian, Prof., Dr. of Hist. Sc.;
A. E. Sarkisian, Major, Dr. of Tech. Sc., Academician of AMSc (Moscow);
N. G. Ter-Grigorian, Lieutenant-General.

Consultation in English Military Terminology: A. Armenian, Ph. D..

CONTENT

MILITARY HISTORY

A. H. Garamanoukian. The Armenian Legion in the light of historical, legal and political issues	5 (35)*
R. O. Sahakian. Combat activities on Caucasus Front in 1914. Sarikamish operation	13 (37)

MILITARY POLITICS. STRATEGIC STUDIES

L. G. Ivashov (RF). Security of CIS: problems and perspectives	39 (65)
R. Peters (USA). The culture of future conflict	45 (68)

MILITARY PSYCHOLOGY AND PEDAGOGY

G. B. Haroutunian. The system of educational work, carried out in the Armed Forces of the Republic of Armenia and ways of its improvement.	75 (84)
--	---------

COMBAT TRAINING

G. S. Abrahamian. Combat activities during retreat: methods to combat depression and panic	86 (95)
--	---------

MILITARY ENGINEERING

R. KH. Grigorian. The principles of mathematical modeling: decision-taking in the process of administering an Army	97 (107)
--	----------

MILITARY-SCIENTIFIC TERMINOLOGY

V. KH. Bagdasarian. Volume dictionary	109
---	-----

* Numbers in brackets mean page of Summary in English.

Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

Յոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ մեքենագրված երկու ի հնտերվալով, մինչև 15 էջ ծավալով, հոդվածին կից պետք է լինի նրա ռուսերեն ամփոփումը մինչև 2 էջ ծավալով:

Յեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Յեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահանջների պահպանման համար:

Յեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիագրամները, սխեմները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Զեռագրերը հետ չեն վերադարձվում:

Յոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմանասնագիտական հապավումները:

К сведению авторов и читателей

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 15 страниц, напечатанных в два интервала, с приложением резюме на русском языке объемом до 2-х страниц.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

Рукописи не возвращаются.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

For the information of the authors and readers

The articles should be in Armenian, in two copies within 15 pages, printed in two intervals, with enclosed summaries in Russian with volume up to 2 pages.

The authors should give footnotes for the used most important sources.

The authors are responsible for accuracy and non-secrecy of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures, photos should be done clearly usable for printing.

The manuscripts are not to be given back.

Please explain the used special-military acronyms.

ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԵՇՈՒՅ ՊԱՏՄԱԿԱՆ, ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՒ ԼՈՒՅՄԻՆ ՏԱԿ*

Ա. Հ. ԳԱՐԱՍԱՆՈՒԽՅԱՆ, գեներալ-լեյտենանտ, իրավաբանության դոկտոր

15 նոյեմբերի 1916 թ. նախարարական որոշումը, որ կհաստատեր Արեգակնայի լեզունը, իր 3-րդ հոդվածին մեջ կտրամադրեր. «Հատուկ հրահանգ մը պիտի ճշտէ լեզենականներուն հատկացումները, որոնք ավզունքով համարժեք պիտի ըլլան ֆրանսացի լինվորի ունեցածին»: Արդ, 26 նոյեմբերի 1916 թ. թիվ 7966—9/11 հրահանգը թեև ճշտած էր կամագորներու թոշակի ու պարենի հատկացումները, սակայն լուս կմնար հանգստյան թոշակի, ընտանեկան հատկացումներու և այլ իրավունքներու մասին: Օժանդակի վիճակեն բրիոյ իրավական դրության տարտամության անպատճեությունը անզամ մը ևս երևան եկավ: 11 հոկտեմբերի 1917 թ. թիվ 7468—9/11 հրահանգը²³ կհայտարարեր. «Լեզենականները կծառայեն իբրև օժանդակ, անոնք մտցված չեն ֆրանսական բանակին մեջ: Կիետին ուրեմն, որ՝

—Արենելյան լեզենին կամագորները իրավունք չունին հանգստյան թոշակի, նաև պարզեի՝ առողջական պատճառով վիճական ծառայութենն արձակման պարագային,

—թոշակի իրավունք գոյություն չունի անոնց այրիներուն և որբերուն համար,

—անոնց ընտանիքներուն, եթե որ կարիքավոր են, չեն ըլլար այն հատկա-

*Սկիզբը, նաև սիրիական բանակի գեներալ-լեյտենանտ Ա. Հ. Գարամանովականի համառոտ կնևագրականը՝ հանդեսի 2-րդ համարում:

²³«Նախարարական իրահանգ թիվ 7468—9/11 և 11 հոկտեմբերի 1917 թվակիր Արենելյան լեզենին հայ և տուրիացի օժանդակ վիճակներու ընապնդությունը բյուջեի օգնության մեջ կատարությունը մատին» (Ը. թ. ու. ա., Levant, Carton 1, L. O.)

յումները, որոնք նախատեսված են ֆրանսացի վիճականներու ընտանիքներուն համար»:

Այս հրահանգին բովանդակությունը դժվար ընդունելի կթվի: Որ լեզենականը իրավունք չունենա որոշ հատկացումներու, որու կվայելին մյուս վիճակականներու, կրնար ընդունվիլ իրավականորեն, պայմանով, որ մասնավորված ըլլային պաշտոնական գրության մը մեջ, բայց ինչպես կարելի է ուրանալ անոր մտցված ըլլալը ֆրանսական բանակին մեջ, եթե հանձնառության ակտը ստորագրած ատեն ենթական կիտատանար «պատվով և հավատարմությամբ ծառայել ֆրանսական դրոշի տակ»: Գնդապետ Բրեմոն՝ Կիլիկիոյ գրավյալ գոտիի իրամանատարը, 18 օգոստոսի 1919 թվակիր իր նամակին մեջ, ուղղված Արևելքի բանակի ընդհանուր իրամանատարության տակ»²⁴:

Նախարարական իրահանգը կավելցուներ. «Զկարենալով լեզենականներուն տալ ֆրանսական բանակի կանոնագրային հատկացումները՝ կառավարությունը այսուհանդերձ հանձն առաջ հատուցում տալ անոնց, որոնք կրնան կորսնցնել կամ նվազած տեսնել աշխատանքի իրենց կարողությունները վիճական ծառայության շրջանին, և օգնել ամենեն ավելի կարիքավոր ընտանիքներուն»: Կիետիներ շարքը նախանը-

²⁴ Ֆ. թ. ու. ա., Levant, Carton 5, L. O.

շումներու «օգնությանց» պակերուն և պայմաններուն այս անձերուն համար, որոնք կգտնվեին վերոհիշյալ երեք պարագաներուն մեջ: Սակայն այս ձեռվ լեզենականներուն տրված «օգնությունները» եեռու էին համարժեք ըլլալե, 1914—1918 թթ. պատերապմի ընթացքին, ֆրանսական բանակին մեջ ծառայած օտար զինվորականներուն շնորհված իրավունքներուն: Անարդարություն մը եղած էր իրենց իբրև հետևանք օժանդակի իրենց հանգամանքին, իրավական կացություն մը, որուն ստեղծման մեջ անոնք ոչ մեկ դեր ունեին:

Պատերապմեն եսոք պատերապմական նախարարը մերժեց գործադրել, Արևելյան լեզենի օժանդակներուն, 31 մարտի 1919 թվակիր օրենքով ճշշտված հատուցումներու օրենսդրությունը²⁵: 2 հունիսի 1921 թվականին հատուցումներու, պարզեներու և հատկացումներու նախարարն պատերապմական նախարարին ուղղված նամակ մը, անդրադառնալով «Հայկական լեզենի նախակին զինվորներուն» տրվելիք հատուցումներուն, կհաստատե, թե 31 մարտի 1919 թ. օրենքի տրամադրությունները կիրարկելի չեն անոնց համար՝ տրված ըլլալով որ այդ օրենքի 75-րդ հոդվածը զանոնք չի հիշեք նպաստավորվող օտարներու շարքին: Նախարարը այս կետը անարդար կգտնե: Ըստ իրեն, «անկարելի կթվի առանց ապրուատի միջոցի ձգել Հայկական լեզենի՝ ֆիզիկական անկարողության մատնված նախկին զինվորականները: Զինվորներ, որոնք ֆրանսական համազգեստ կրած են, դեկավարված են ֆրանսական հրամանատարներով, չեն կրնար նվազ նպաստավոր վերաբերումի ենթարկվիլ, քան այլ ապահով կամավորները: Ան առաջ կրերեն նաև այն փաստարկությունը, թե Արևելյան լեզենը

²⁵ «31 մարտի 1919 թ. օրենքը, որ կիրում ցամաքային և ծովային բանակներու կենսաթոշակի օրենսդրությունը՝ պատահած մասերու, ստացված վերերու և զինվորական ծառայության ընթացքին առնված կամ ծանրացած հիվանդություն տեսակետեն» («Ֆրանսական Հանրապետության պաշտոնաթերթ», 2 ապրիլի 1919 թվակիր):

կապմակերպելու կոչված ֆրանսական զինվորական առարկությունը խոստացած էր, «որ կամավոր հանձնառուները իրավունք պիտի ունենային, պատերապմի ընթացքին և անվե ետք, ենթարկվելու նույն վերաբերումին, ինչ որ ֆրանսական զինվորականները»²⁶: Նախարարը կառաջարկեր իր պաշտոնակիցին «հետադարձաբար մտցնել Հայկական լեզենի զինվորականները օտար լեզենին մեջ, ինչ որ թույլ պիտի տար անոնց հատուցումներ ընելու, քան մը, որ ամենայն արդարությամբ անկարելի է մերժելու»²⁷:

Հատուցումներու նախարարը հաջողություն չունեցավ: Ձերևս ավելի քաղաքական մոտենում ցուցաբերած կրլլար իր կողմն, եթե պահանջեր 31 մարտի 1919 թ. օրենքի 75-րդ հոդվածին մեջ ավելցնել Արևելյան լեզենին անունը, եթե ատիկա անհրաժեշտ էր: Սակայն մեզ կթվի, թե նման իրավական թերքնիքի* մը դիմելը անհրաժեշտ չէր, որովհետև 31 մարտի 1919 թ. օրենքին ճշշում մեկնաբանությունը թույլ պիտի տար Արևելյան լեզենի նախկին զինվորներուն օգտվելու անոր տրամադրություններն: Այս օրենքը, իրավական մեջ, ֆրանսական բանակի ամբողջ անձնակազմին վերաբերող հասարակաց իրավունք մը կհաստատեր. զինվորական միավորներու թվարկում չկար, հետևաբար Արևելյան լեզենի զինվորականները ևս պետք է նկատի առնվելին անոնց մեջ: Եթե 75-րդ հոդվածը հատուկ հիշատա-

²⁶ 15 նոյեմբերի 1916 թվակիր նախարարական որոշումը, որ կհաստատեր Արևելյան լեզենը, իր 3-րդ հոդվածին մեջ կտրամադրեր, որ «հաստուկ հրահանգ մը պիտի ճշտն իրենց հատկացումները, որոնք պիտուրով համարժեք պիտի ըլլան ֆրանսացի զինվորի ստացածին»: Ձիվ 7966—9/11 և 26 նոյեմբերի 1916 թվակիր նախարարական հրահանգը, որ կիրաբակերպեր Արևելյան լեզենը, ճշտած էր թոշակներու և պարևնի հատկացումները, սակայն լու կմսար հանգստյան թոշակի մասին: Ձիվ 7468—9/11 և 11 հոկտեմբերի 1917 թվակիր հրահանգն էր, որ հաստատեց մյուս հատկացումները:

²⁷ «Նամակ թիվ 1165 և 2 հունիսի 1921 թվակիր» (Փ. բ. պ. ս. ա., Levant, Carton 1, L. O.):

* Ձերքնիք—տեխնիկա:

կություն ըրած էր լեհական և չեխոպլ-վակյան բանակներուն մասին, պատճառը այն էր, որ այդ միավորները մաս չէին կազմեր ֆրանսական բանակին. անոնց ստեղծման վերաբերյալ իրամանագիրներուն մեջ կճշտվեր, որ խոսք «ինքնավար» զորագունդերու մասին էր, որոնք «վկովեին իրենց սեփական դրոշին տակ»²⁸:

Նույնը չէր պարագան լեգեոնին, բայց պատերազմական նախարարը կառած մնաց իր սխալ ըմբռնումին, թե՝ արևելյան լեգեոնականները մտցված չէին ֆրանսական բանակին մեջ: Զարմանալի է նկատել, որ Պետական խորհուրդը հաստատած է այս մոտենցումը: Այս ատյանին կողմանե տրված առնը-վազն երկու վճիռ կա²⁹, որոնցմով կմերժվի Արևելյան լեգեոնի նախկի վիճակորականներուն կենսաթոշակ տալ: Պետական խորհուրդը ջնշեց կենսաթոշակներու գավառային դատարաններու որոշումները նախկին լեգեոնականներու հատուցումներ տալու մասին: Ան նկատենց, որ մասնավոր որևէ տրամադրություն նախատեսված չէր Արևելյան լեգեոնի վիճակականներուն համար, ինչպես որ եղած էր «Ֆրանսայի մեջ ստեղծված լեհական և չեխոպլվակյան բանակներուն» պարագային, և թե անկասկած է, որ պահանջողը «երբեք չէ պատկանած ֆրանսական ցամաքային և ծովային բանակներու վիճակական կազմի մը»:

Նշենք տակավին լեգեոնական կանոնագրության մեկ ուրիշ մասնահատ-կությունը, այն, որ կվերաբերի հանձնառությանց ջնջումին: Համաձայն վե-



Անգլիացի գեներալ Է. Ալեքսի, դաշնակից զորքերի հրամանատարը պահեստինան ուղարկածատում

րոհիշյալ 26 նոյեմբերի 1916 թ. նախարարական իրահանգի տրամադրությանց, զորագունդի պետը կրնար ջնշել լեգեոնականին հանձնառությունը ֆիվիլական անընդունակության և կարգապահական պատճառներով: Այս վերջին դրդապատճառը, որ լեգեոնականին համար ստեղծված իրավական աննը-պաստ դրության հետևանք էր, կրնար տեղի տալ չարաշահությանց, մանավանդ երբ արտակարգապահական այլ նկատումներ առաջնորդեին լեգեոնականին պետերը:

Լեգեոնականին հանձնառության ջնջումը կրնար հետևանք ըլլալ նաև լեգեոնի զորացրումին: Ահա 26 նոյեմբերի 1919 թ. նախարարական իրահանգի մեկ ուրիշ տրամադրությունը, որ, իր կարգին, կրնար տեղի տալ չարաշահման արարքներու: Ան թույլ կուտար լեգեոնականին զորացրումը նույնիսկ պատերազմի ավարտեն առաջ, երբ պարագաները այլևս անհրաժեշտ չէին դարձներ լեգեոնին գոյությունը: Արդեն այս է, որ պատահեցակ, երբ քաղաքական նկատառումներու հետևանքով վերջ տրվեցավ վիճակական այս միավորին:

²⁸ «Հրամանագիր 4 հունիսի 1917 թվակիր ֆրանսայի մեջ լեհական բանակին մը ստեղծման վերաբերյալ» («Ֆրանսական Հանրապետության պաշտոնաթերթ», 5 հունիսի 1917 թվակիր): «Հրամանագիր 16 դեկտեմբերի 1917 թվակիր շնորհականին բանակին մը ստեղծման վերաբերյալ» («Ֆրանսական Հանրապետության պաշտոնաթերթ», 19 դեկտեմբերի 1917 թվակիր):

²⁹ «Վճիռ Պետական խորհուրդի 8 նոյեմբերի 1932 թվակիր. հանգստյան թոշակի նախարարը ընդուն Գուլյանի» (Recueil Lebon, 1932, p. 925), «Վճիռ Պետական խորհուրդի 15 հունիսի 1933 թթվակիր. հանգստյան թոշակի նախարարը ընդուն Մանվիլյանի» (Recueil Lebon, 1933, p. 632):

ԹԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Շատ մը հարցեր պիտի շնորհականացին, եթե Արևելյան լեգեոնի կյանքին մեջ քաղաքականության դերը չվերլուծվեր գեր հակիրճ կերպով։ Քաղաքականությունը դեր ունեցավ լեգեոնի ծնունդին, գոյության և անոր վախճանին մեջ։

Արևելյան լեգեոնի կազմությունը քաղաքական նպատակ մը ուներ։ Եթե Զեբել-Մուսայի հայերը ինքնարուխ կերպով ուզեցին զինվորագրվիլ ֆրանսական դրոշի տակ առ ի երախտագիտություն ֆրանսական ծովույժին կողմն իրենց փրկումին, այս միավորին ստեղծումը այնպես, ինչպես որ տեղի ունեցավ, քաղաքական նպատակ մը կինտապուղտեր։ 1916 թ. Լոնդոնի եռյակ համաձայնությունը նպատակ ուներ Կիլիկիո մեջ հայերուն ինքնավարություն մը տալ, և լեգեոնը իիմը պիտի կազմեր հայկական բանակի մը։ Կիլիկիո մեջ։ Հայ ազգային պատիքակության նախագահին կողմն 27 հոկտեմբերի 1916 թ., համաձայնության կնքումնեն հայ Կահիրեի Ազգային միության դրկիված հեռազբոր բավական հատակ է։ «Կիատուատեմ կամավորներու հարցի մասին 6 հոկտեմբերի նամակ»։ Բացահայտ երաշխիք ստացած ըլլալով, որ գաշնակիցներու հստրանակեն վերջ մեր ազգային բարձանքները պիտի գոհացին, կիանձնաբարեմ ձևի ձեռք առնել տալ բոլոր միջոցները բաջալերելու և դյուրացնելու համար կարելի ամենամեծ թիվով կամավորներու զինվորագրությունը»³⁰։ Հայ պատիքակներ դրկիված թիվ մը ամեն տեղ մասնավորաբար Միացյալ Նահանգներ, հայկական վորք գաղութներն ըստ հնարավորի մեծ թիվով կամավորներ զինվորագրելու համար։

Կազմված 1916 թ.՝ Արևելյան լեգեոնը ճակատ մեկնեց 1918 թ. օգոստոսին միայն³¹։ Բրիտանական կառավագա-

³⁰ Հետագիրն պատմենք կա ֆրանսայի արտաքին գործոց նախարարության արխիվներուն մեջ (Guerre 1914—1918, Légion d'Orient, թղթածրար թիվ 980, թիրթ 191)։

³¹ Այս թվականնեն առաջ Սուրբ նավարածինը, որուն նախական էր Արևելյան լեգեոնը, լի-

բության բոնած դիրքը, որ ուշացուցած էր լեգեոնի կազմությունը ֆրանսական դրոշին տակ, պատճառ եղած էր նույնացիս զինվորական այս միավորի՝ պատերազմի մասնակցության ուշացումին։ Անգլիացիները ֆրանսական զորագունդեր չեին ուսկը Արևելյան մեջ³²։ Համենայն դեպքա, ֆրանսական զորագունդերը մասնակցեցան 1918 թ. սեպտեմբերի մեծ հարձակողականին Պահեստինի ճակատին վրա, և Արևելյան լեգեոնը միակը գրավեց Լիբանանն ու Կիլիկիան։

Կիլիկիո գրավման մասին պատերազմական նախարարության հղած իր տեղեկագրին մեջ Արևելյան ֆրանսական զորախումբերու հրամանատար զորագարը կգրե։ «Կարծեսի պարտականությունը ստանձնելով թրքական բանակի նահանջին հետևելու մինչև Տավրոսյան լեռներ և ապահովելու զինադադարի տրամադրությանց գործադրությունը՝ ձերքակալելով ուշացած տարրերը և ստանձնելով պատերազմական իրեղեններու հանձնումը»³³։ Այս գրավումն է, զոր անգլիացիները, արդեն դառնացած ֆրանսական ներկայութենեն Լիբանասի մեջ, չներեցին ֆրանսացիներուն, և Արևելյան լեգեոնն էր, որ, Հայկական լեգեոն դարձած, կրեց դաշնա-

գետականների կազմված փորյ խոմքեր գործածած էր բազմաթիվ անգամներ արշավանքներ ընկալու թրքական ծովեկերին վրա, հարդրում միջոցները կործանելու և Գատառե-Ռիվո և Ռուաթ լրբացներու մեջ զորանիւս հաստատելու համար (ֆ. թ. պ. ա. ա., Levant, Carton 2, L. O.)։

³² Մեր նյութեն դուքս է պատմական բանի անգր-ֆրանսական հարաբերությանց Միջին Արևելիք մեջ, 1914—1918 թթ. պատերազմի թվականը և երկու համաշխարհային պատերազմներու միջև ինքը ժամանակամիջոցին, սակայն կրտսելու փոքր թերթ մը, որ կաս ունի այս լեգեոնին հետո։ Այս միավորը չընկցավ իր դրոշակիր մինչև 1919 թ., բայց անգլիական հրամանատարությունը միշտ մերժած էր, որ ֆրանսական դրաշներ տեսնելի զորահանդեսներու ընթացքին։ «Արևելյան ֆրանսական զունդկուր հրամանատար զորագարին թիվ 282/G և ապրիլի 1919 թվակիր նամակը՝ ուղարկած պատերազմական նախարարին» (ֆ. թ. պ. ա. ա., Levant, Carton 5, L. O.):

³³ «Արևելյան ֆրանսական զորախումբերու հրամանատար զորագարին թիվ 22/G և 4 հունվարի 1919 թվակիր հեռագիրը» (ֆ. թ. պ. ա. ա., Levant, Carton 5, L. O.):

կիցներու անհասկացողության* հետեւանքը:

1919 թ. հունվարի սկիզբը զորավար Ալենքի հրահանգ տվագ Արևելքի ֆրանսական զորախումբերու հրամանատարին՝ Արևելյան լեգեոնը քաշելու Կիլիկիային զայն փոխարինելու համար հնդկական բրիգադով մը³⁴: Քանի որ այս հրահանգը չգործադրվեցավ, անգլիական հրամանատարությունը ուրիշ միջոցի դիմեց. հրահանգեց Կիլիկիային քաշել Հայկական լեգեոնը և զայն Մարտոր** դրկել³⁵, միաժամանակ ընդդիմանալով, որ ֆրանսական գրավման զորախումբը զորացվի Ֆրանսային եկող պինգորներով, որոնք պիտի ապահովեին Ֆրանսայի ներկայությունը Կիլիկիու մեջ³⁶:

Իրավունքը օգնության հասավ ֆրանսական հրամանատարության: Անգլիայիներուն պատասխանվեցավ, որ «Հայկական լեգեոնի կանոնագրությունը չէր թույլատրեր անոր օգտագործումը Կիլիկիային դուրս»: Արդարեն, լեգեոնականները իրենց հանձնառությունը ստորագրած էին Թուրքիո դեմ կովելու համար, և, ինչպիս որ ֆրանսական բարձր գոմիսներ*** կնշեր Փարիզ ուղարկած իր հեռագրին մեջ, «կամավորները պանդվածով պիտի պահանջեին ջնշել իրենց հանձնառությունը», եթե Մարտը դրկվեին³⁷:

Զկարենալով ո՞չ քաշել և ո՞չ ալ Մարտը դրկել տալ լեգեոնը՝ զորավար

* Անհասկացողություն—անհամաձայնություն, փոխըմբռնման բացակայություն:

³⁴ «Արևելքի ֆրանսական զորախումբերու հրամանատար գորավարին թիվ 31/G և 5 հունվարի 1919 թվակիր հեռագիրը» (Փ. թ. պ. ս. ա., Levant, Carton 5, L. O.):

** Մարտոր—Մարտկո:

³⁵ «Արևելքի ֆրանսական զորախումբերու հրամանատար գորավարին թիվ 331/G և 5 մարտի 1919 թվակիր հեռագիրը» (Փ. թ. պ. ս. ա., Levant, Carton 5, L. O.):

³⁶ «Արևելքի ֆրանսական բարձր գոմիսներ ժորժ Պիկոյի թիվ 242 և 3 մարտի 1919 թվակիր հեռագիրը» (Փ. թ. պ. ս. ա., Levant, Carton 5, L. O.):

*** Գոմիսներ—կոմիսար:

³⁷ «Արևելքի ֆրանսական բարձր գոմիսներ ժորժ Պիկոյի 8 մարտի 1919 թվակիր հեռագիրը» (Փ. թ. պ. ս. ա., Levant, Carton 5, L. O.):



Գերմանացի գեներալ
Օ. Լիման ֆոն Զանդերս,
թուրքական զորքերի հրամանատարը
պաղեստինյան ուազմանականում

Ալենքի պահանջեց անոր լուծարքը: Առաջ քշված**** պատրվակը հայ վինակորներու այսպիս կոչված օրինազանցություններն էին թուրք բնակչության նկատմամբ: Մասնակի գոհացում մը տրվեցավ անգլիացիներուն՝ զորացրումովը Հայկական լեգեոնի 4-րդ գումարտակին, որ դեռ նոր կազմված էր հայ նորազատ ուազմագերիներով³⁸: Այս գումարտակի անձնակազմին մեկ մասը զորացրվեցավ և մյուս մասը ցրվեցավ մը նայալ երեք գումարտակներուն մեջ: Բանակի պատմական սպասարկության թղթածրարներուն մեջ մենք չգտանք վավերաթուղթներ, որոնք տային պատճառը և իրավական հիմնավորումը այս զորացրումին: Կրնա ըլլալ, որ այս միավորը կազմված էր և անոր վինգորները զենքի տակ առնված էին առանց անգլիական հրամանատարության արտոնության և որ այս իրողությունը իբ-

³⁸ «Արևելքի ֆրանսական զորախումբերու հրամանատար գորավարին 27 մարտի 1919 թվակիր տեղիկագիրը՝ ուղղված անգլիական 21-րդ զորամարտինին» (Փ. թ. պ. ս. ա., Levant, Carton 5, L. O.):

**** Առաջ քշված—առաջ մղված, չարաշակած:

թև դրդապատճառ նկատի առնված էր անոնց պայմանագրության ջնջումին համար: Արևելքի ֆրանսական զորախումբերու հրամանատարին կողմն մեկ ամիս ետք Հայֆայի անգլիական հրամանատարության ուղղված նամակ մը, որով արտոնություն կիմնդրվեր հայեր վինվորագրելու՝ ամբողջանելու համար վինվորներուն թիվը, նախապես անգլիական արտոնության մը անհրաժեշտությունը ցույց կուտա և կրնա հիմնավորել մեր առաջ բերած թեկով³⁹:

Մեկ ամիս ետք զորավար Ալենքի կրկին անդրադարձավ նույն հարցին. ան երկրորդ անգամ ըլլալով պահանջեց Հայկական լեգոնին զորացրումը⁴⁰: Տըրաված ըլլալով որ դարձյալ խոսք կըլլար թուրք բնակչության նկատմամբ հայ վինվորներու վերաբերումի մասին, հակառակ անոր, որ մենք պատմության գիրք չենք գրեր, պետք է թերևս պատասխանել թուրքերու այս ամբաստանության, որոնց անգիտացիները ականջ կուտային շատ հաճոյակատարորդնն⁴¹: Լազարասիանենք պարզապես ապացուցանելու համար, որ քաղաքականությունը ուժին կերպով կմիջամտեր Արևելյան լեգենդի կյանքին: Միայ պիտի ըլլար կարծել, որ հայ վինվորները, եթե անվախ էին, նաև անմեղադրելի եղան միշտ: Պահանջել անոնցմն տարեկան վինվորագրյաներու հատուկ ընթացք մը պարզամտություն պիտի ըլլար, և ոչ մեկ վինվորական պետ երբեմ պահան-

ջած է և հաջողած է ձեռք բերել նման ընթացք մը իր ուսպմիկներեն: Այն քանի մը օրինապանցությունները, զորս լեզեռնականները գործեցին, նույնիսկ եթե բայսատրելի էին այն բոլորով, զորս թուրքերը ըրած էին հայերուն, չանցան սահմանները որևէ երկրի մեջ որևէ հաղթական բանակի հոռի վարքերուն: Եպրակացնելու համար կարելի է մեջքերեկ Կիլիկիո գրավման մասին Արևելքի ֆրանսական զորախումբերու ընդհանուր հրամանատարի տեղիկագրին այն հատվածը, որ կցոլացնե հայ վինվորներուն հոգեվիճակը այնքան, որքան անոնց ընթացքը: Զորավարը կգրե, թե Կիլիկիան գրավելու համար միայն «հայ վինվորներ ուներ, որոնք կայրեին այնքան տարիներ իրենց կրած անիրավությանց վրեժը լուծենու փափազով: Երկաթյա կարգապահություն պետք էր զանոնք ստիպելու համար, որ իբրև վինվոր վարւին, և ես տրամադրությանս տակ նույնիսկ ֆրանսական մեկ գումարտակ չունեի իրնապանդություն պարտադրելու համար հայկական հակազդեցության սանձակերման պարագային և կարգը վերահաստատելու համար դեռ հնարավոր ծանր խովությանց պարագային: Նման պայմաններու մեջ ես զիս երջանիկ պետք է նկատեմ, զախ ապդելու միջոցով և առանց ծանր միջադեպի, Կիլիկիո թուրք վինվորական և վարչական իշխանությունները ֆրանսական գրավման ենթարկել հաջողելուս համար»⁴²:

Հայկական լեգենդը լուծարքի ենթարկելու անգլիական պահանջը իրավական ոչ մեկ հիմք ուներ: Հայերը հանձնառու եղած էին ծառայելու պատերազմի ընթացքին, որ դեռ վերջ գտած չէր, և քանի մը վինվորներու անհատական հանցանքները, որքան ալ ծանր եղած ըլլային, չին կրնար առաջնորդել* հավաքական պատժարկումի մը: Հայկական լեգենդի լուծարքին քաղաքական և վինվորական անպատեհությունները չեին խուսափած Արևելքի ֆրանսական

³⁹ «Արևելքի ֆրանսական զորախումբերու հրամանատար զորավարին թիվ 11027/1 և 26 սեպտեմբերի 1919 թվակիր նամակը» (Փ. բ. պ. ս. ա., Levant, Carton 5, L. O.):

⁴⁰ «Արևելքի ֆրանսական զորախումբերու հրամանատար զորավարին թիվ 578/G և 29 ապրիլի 1919 թվակիր հեռագիրը» (Փ. բ. պ. ս. ա., Levant, Carton 5, L. O.):

⁴¹ Արևելքի ֆրանսական բարձր գոմիսեր ժողով Պիկոյի՝ արտաքին գործոց նախարարին ուղղած թիվ 342 և 3 մարտի 1919 թվակիր հեռագրեն հատված մը ցույց կուտա անգիտացիներու կողմնակալության չափը. «Անգլիական կառավարության համար միշտ դյուրին պիտի ըլլա պնդել, թե այս զորաժողովը (հայերու) կիսովին թուրքերը և կրնա ստեղծել խռովիչ վրդովունք» (Փ. բ. պ. ս. ա., Levant, Carton 5, L. O.):

⁴² «Հետագիր թիվ 22/G և 4 հունվարի 1919 թվակիր՝ արդեն հիշված:

* Առաջնորդել—հանգեցնել:

իշխանությանց ուշադրութենքնեն, որոնք պանոնք հաղորդեցին Փարիզ⁴³:

Արևելքի ֆրանսական գորախումբերու իրամանատարը պատասխանեց անգլիացիներուն. «Առանց պատերազմական նախարարության արտոնության իրավունք չունիմ լրտերու Հայկական լեզենու և անկե նման բան կրնամ պահանջել միայն բարձր գոմիսեր պրն. Ժորժ Պիկոյի համաձայնությամբ, որուն մոտապուտ Բնյորութ ժամանման կապասեմ»⁴⁴:

Հայկական լեզենի լրտերը տեղի չունեցավ անգլիական ուղղակի ճնշման տակ, սակայն տեղի ունեցավ ավելի ուշ՝ Մերձավոր Արևելքի ֆրանսական քաղաքանության մեջ եղած փոփոխության հետևանքով: Մնաց որ այն օրեն ի վեր, երբ Արևելքի մեջ Անգլիո և Ֆրանսայի գրավման գոտիները հստակորեն ճշտվեցին, և երբ ամեն երկիր գրավեց իր գոտին, ֆրանսական գունդերը դադրեցին անգլիական իրամանատարության ենթարկվելն. այսուհետև վերջինս չը կրնար իրահանգներ տալ այլևս ֆրանսական իրամանատարության: Սակայն 1919 թ. վերջերը ֆրանսական արևելյան քաղաքականության մեջ շատ թրքանդպաստ արենում* մը մկան երևան գալ⁴⁵: Այս նոր քաղաքականության մուրհակը վճարողը հայերը եղան, իսկ օգտվողները՝ քեմալական թուրքերը: Այս քաղաքականությունը ճակատագրականորեն առաջնորդեց Հայկական լեզենի լրտերին և մեկ տարի ետք ֆրանսայիներու կողմէն Կիլիկիո լրումին⁴⁶: 1919 թ.

⁴³ «Հեռագիր թիվ 578/G և 29 ապրիլի 1919 թվակիր»՝ արդեն հիշված:

⁴⁴ «Արևելքի ֆրանսական գորախումբերու իրամանատար գորավարին թիվ 7203/3 և 23 ապրիլի 1919 թվակիր հեռագիրը» (Փ. բ. պ. ս. ա., Levant, Carton 5, L. O.):

* Արենում—դրսնորում:

⁴⁵ Հատկանշական է նկատել այն տարբեր տիրողները, զոր ունեցան Արևելքի ֆրանսական բարձր գոմիսերները՝ «Ֆրանսական Հանրապետության բարձր գոմիսեր Սուրբու և Հայստանի», «բարձր գոմիսեր Սուրբու և Կիլիկիո» և այս «բարձր գոմիսեր Սուրբու և Լիքուանի»:

⁴⁶ Անկարայի դաշնագիրն է՝ ստորագրված 20 հոկտեմբերի 1921 թ., որ վերջ դրավ պատերազմական վիճակին ֆրանսայի և Թուրքին մի-

փախանին Հայկական լեզենի երկու նոր միավորներու կազմության արտոնության մասին խնդրանքի մը արդեն կապատասխանվեր հետևյալ ձևով ֆրանսայի վարչապետ և պատերազմական նախարարին կողմանն. «Մենք շահ չունինք մեծանելու, ոչ իսկ պահպանելու թիվը այս լեզենին, որուն կարևորությունը, արդարացված՝ պատերազմի գործողությանց ընթացքին, այլևս չի համապատասխաներ խաղաղեցման գործին, զոր պարտավոր ենք շարունակելու Սուրբին և Կիլիկիո մեջ ամենայն անկողմնակալությամբ»⁴⁷:

Արևելքի ֆրանսական իշխանությունները զոր փորձեցին զգալ տալ Կիլիկիո մեջ հայկական ուժեղ զորախումբի մը անհրաժեշտությունը քեմալականներուն դեմ իրենց պայքարին մեջ. ֆրանսական կառավարությունը հրահանգեց աստիճանաբար և գաղտնորեն նվազեցնել Հայկական լեզենին թիվը: Բեյրութին համապատասխան իրահանգներ տրվեցան Աղանայի զորաբաժնի իրամանատարին և պարբերաբար հիշեցումներ եղան այդ մասին: Աստիճանաբար Հայկական լեզենի երեք գումարտակները մեկի հջան⁴⁸: Իրավականորեն ասիկա կարելի էր օգտագործվեցան 26 նոյեմբերի 1916 թ. նախարարական իրահանգի տրամադրությունները, որոնք կը զնի և որոշեց Կիլիկիո պարագումը ֆրանսական գումարեն: Անգլիա պաշտոնապես բոլորք Ֆրանսական առաջնորդներին հետևյալ անշատ խաղաղություն կարվելու համար, բան մը, որ հակառակ էր 30 նոյեմբերի 1915 թ. հայտարարության, որով դաշնակիները «պայպանավորվեին, իրարու ենտ, անշատ խաղաղություն կնքեի ներկա պատերազմի ընթացքին»: Հայտարարության պատճենը տև Պ. Ֆուշ, նշ. աշխ., հ. 2, էջ 104**:

* Այս աշխատությունն անշուշտ վկայակոչված է հեղինակի ատենախոսության Հայկական լեզենին նվիրված գլխին նախորդող գումարում:

⁴⁷ «Ֆրանսայի վարչապետ և պատերազմական նախարարին թիվ 10349-9/11 և 17 դեկտեմբերի 1919 թվակիր պաշտոնագիրը՝ ուղղված Արևելքի ֆրանսական գորախումբերու հրամանատար գորավարին» (Փ. բ. պ. ս. ա., Levant, Carton 5, L. O.):

⁴⁸ «Արևելքի բանակի ընդհանուր հրամանատարին թիվ 373/2/1 և 22 ապրիլի 1920 թվակիր հեռագիրը ֆրանսական 1-ին զորաբաժնի հրամանատարին» (Փ. բ. պ. ս. ա., Levant, Carton 5, L. O.):



Հայկական լեգեոնի հաշմանդամ զինվորները Մարտելում

թույլատրեին իբրև կարգապահական միջոցառում ջնջել հանձնառության պայմանագրությունները: Զինվորական կանոններեն նվազագույն շեղումը պատրիվակ ծառայեց ճամփելու համար լեզենականները, որոնք, պատրանաթափ*, դեմքերու դարձվածքն, իբրև կարգին, չխուսափեցան անոր առիթ տալիք⁴⁹: Քազմաթիվ լեզենականներ անձամբ պահանջեցին իբրև արձակումը: Վերջապես, 1 մայիսի 1920 թ. Քեյրութեն եկավ վերջին գումարտակին զորացրման հրահանգը: Այդ օրերուն անոր կեսը կապաշտպաններ պաշարված զորանիստ մը, որուն հետ հաղորդակցությունները կտրված էին: Այս պատճառով անոր զորացրումը ուշացվեցավ

* Պատրանաթափ—պատրանքներից պատված, հիասթափված:

⁴⁹ Փարիզեն հրահանգներ տրվեցան, որպեսի հայեր վինվորագրեն օտար լեզենի համար: Աղանայի շրջանի հրամանատար գորավարի պատասխանած էր: «Զորացրման գործողությունները կապատադրեն, որ նախ հաղորդակցությունները վերահստատվին Աղանայի և Զիհանի միջև: Ես չեմ կրնար արձակել հայերը, որոնք Զիհան կգտնվին, քանի առոնք չեմ լրնար ձգել այդ վայրը»: «Հետագիր թիվ 1402/3 և 17 հունիսի 1920 թվակիր» (ֆ. բ. պ. ս. ա., Levant, Carton 5, L. O.):

մինչև 1 սեպտեմբերի 1920 թ.⁵⁰: Իրականին մեջ զորացրումը ավարտեցավ միայն 27 սեպտեմբերի 1920 թ.⁵¹: Պետք է նկատել, որ Արևելքի բանակի ընդհանուր հրամանատարին կողմէն տրված զորացրման հրահանգը որևէ ակնարկություն չէր պարունակեր նախարարական որոշումի մը մասին: Կթվի, թե նախաձեռնությունը կատարված է Բեյրութի մեջ, Կիլիկիո մեջ ֆրանսական քաղաքականության ընդհանուր արևելումն ներշնչված: Լեզենականներուն արձակու-

⁵⁰ Կրկնակի հրամաններուն, զորս թերութեն կատանար, Աղանայի շրջանի հրամանատար զորավարը պատասխանած էր: «Զորացրման գործողությունները կապատադրեն, որ նախ հաղորդակցությունները վերահստատվին Աղանայի և Զիհանի միջև: Ես չեմ կրնար արձակել հայերը, որոնք Զիհան կգտնվին, քանի առոնք չեմ լրնար ձգել այդ վայրը»: «Հետագիր թիվ 1402/3 և 17 հունիսի 1920 թվակիր» (ֆ. բ. պ. ս. ա., Levant, Carton 5, L. O.):

⁵¹ «Վերջին հայ կամագորներու վինաթափությունը և զորացրումը ամբողջական կերպով լրացավ 27 սեպտեմբերի 1920 թ.»: «Կիլիկիո զորաբաժնի հրամանատար գորավարին թիվ 1871/3 և 1 հոկտեմբերի 1920 թվակիր հետագիր Արևելքի բանակի ընդհանուր հրամանատարին» (ֆ. բ. պ. ս. ա., Levant, Carton 5, L. O.):

մը հետևանք չէր անոնց հանձնառության պայմանագրության պայմանաժամի պարտին: Արդարս, 24 հոկտեմբերի 1919 թ. հրամանագիրը, գրված 23 հոկտեմբերի 1919 թ. օրենքի 2-րդ հոդվածի տրամադրությանց հիման վրա, օրենք, որ հրավականորեն վերջ կրուտար պատերազմական վիճակին Ֆրանսայի մեջ, — իր առաջին հոդվածին մեջ կորամադրեր, որ «Հայկական և Սուրբական լեզեններուն օժանդակ լեզեննականներուն պատերազմի տևողության համար ստորագրած հանձնառության պայմանագրությանց վավերականությունը երկարաձգված է մինչև այս թվականը, որ պիտի ճշովի հրամանագրով և որ պիտի չկրնա անցնիլ թվականին անդին այն օրենքին, որ պիտի վավերացնե խաղաղության դաշինքը Ձուրքին հետ:

Այս գորացրումը համապատասխան էր 26 նոյեմբերի 1916 թ. Նախարարական հրահանգի տրամադրություններուն, որ հստակորեն կըսեր. «Եզենոնը կրնա վիճացրվիլ պատերազմական նախարարին կողմեց»⁵², և լավ կհարմարեն

⁵² Կիլիկիա իր կատարած քննության ընթաց-

իրենց օժանդակի հանգամանքին պատճառով լեզեննականներուն համար բաւեղծված իրավական անորոշ կացության: Ըսդհակառակը, համապատասխան չէր ո՛չ տառին և ո՛չ աղ ոգիին դաշնակիցներուն և հայ ազգային պատվիրակության միջն 1916 թ. կարգած համաձայնության, որ կվերաբերեր Կիլիկիո մեջ հայերուն ինքնավարության տվյության* և ապօպային բանակի մը կազմության, որուն իմը պիտի կազմեն լեզենը: Սակայն պատմության մեջ առաջին անգամ չէ, որ քաղաքականությունը հաղթանակ կտաներ իրավունքին վրա:

Քին Կրեսիք բանակի ըստհանուր հրամանատար գորացք Գուրուն իր 19 օգոստոսի 1920 թվակիր օրակարգին մեջ կաստարաքեր. «Ապանք, ենթասպաններ, տասնապետներ՝ և լեզեննականներ՝: Զեզմ բաժնեկիր նախօրյակին պարտք կզգամ ձեզ փի արտահայտել երախտագիտությունս ձեր փառապանծ ծառայություններուն համար: Դիտի պահեմ անշնչի հիշտակը ձեր քաջության և նուանդին: Վեհանձն Ֆրանսան հպարտությամբ պիտի հիշե, որ պատիվն ունեցավ Հայաստանի զավակներուն վասակերու մաս մը սկիններ, զորս անոնք գործածեցին խանդավառությամբ»:

* Ինքնավարության տվյություն-ինքնավարության շնորհում, ինքնավարություն տալը:

ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1914 թ. ԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՍՏՈՒՄ. ԱԱՐԻՂԱՄԻՇՅԱՆ ՕՊԵՐԱՑԻԱՆ

Ռ. Օ. ԱԱՀԱԿՅԱՆ, մայոր, պատմական գիտությունների թեկնածու

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանկան Ձուրքիան հանդես եկավ որպես Եռյակ միության՝ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Բութիայի դաշնակից տերություն: Պետության ղեկը գտնվում էր երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցության ձեռքում: Երիտթուրքերը համոզված էին, որ պատերազմը առիթ է իրականացնելու իրենց վաղեմի երազանքը՝ «Մեծ Ձուրան» պետության ստեղծումը:

Դեռևս 1914 թ. հուլիսի 20-ին Վ. Պոլսում ավստրոհունգարական դեսպան Յոհան Ֆոն Պալլավիշինին Վիեննա էր հաղորդել, որ զրույց է ունեցել Օսման-

յան Ձուրքիայի ռազմական նախարար Ենկիր ֆաշայի հետ: Վերջինս դեսպանին տեղեկացրել էր իր տերության ռազմական պատրաստությունների մասին՝ խոստանալով միայն մեկ ամսվա ընթացքում զենքի կոչել 300-հազարանոց բանակ, ինչպես նաև ապատամբության հրահրել Ռուսաստանի մահմեդականներին¹:

Երբ 1914 թ. օգոստոսի 1-ին բռնկվեց առաջին համաշխարհային պատերազմը, Ձուրքիան սպաստղական դիրք գրավեց. Երիտթուրք կառավարողների համար խիստ կարևոր էր Բուլղարիայի և Հու-

¹ Sie A. Ohandjanian. Der verschwiegene Völkermord. Wien, 1989, S. 78.

նաստանի դիրքորոշումը: Բուլղարիայի միացումը Եռյակ միությանը հնարավորություն տվեց նրանց ավելի ուժեղացնելու ռազմական պատրաստությունները: Գերմանիայից ստացվեց պատկանի դրամական օժանդակություն²:

Թուրքական հրամանատարությունն առաջին հերթին մեծ ուշադրություն էր դարձնում Ռուսատանի դեմ ծավալվելիք մարտական գործողություններին: Ակտիվանում էր թուրքական ու գերմանական հետախուզությունների գործունեությունը Պարսկաստանում և Կովկասի մահմեդական բնակչության, հատկապես ռուս-թուրքական սահմանամերձ տարածքներում բնակվող քրդերի շրջանում³: Թուրքական հետախուզությունն առանձնահատուկ հետաքրքրություն էր յուցաբերում Հյուսիսային Պարսկաստանում տեղակայված ռուսական զորքերի նկատմամբ⁴:

Գերմանական «Գերեն» ծանր հածանավը և «Քրեսլառ» թեթև հածանավը, միացվելով թուրքական ռազմածովային սավասորմին, փոխեցին ուժերի հարաբերակցությունը Աև ծովում: Թեև այս երկու ռազմանավերը ձևականորեն գընվեցին սուլյանական կառավարության կողմից, իսկ նրանց անձնակազմերը ծովակալ Սուլյոնի հրամանատարությամբ անցան թուրքական ծառայության, սակայն բոլորի համար պարզ էր, որ հածանավերի առօր ու վաճառքը կեղծ է⁵:

² Տես Ռիֆաթ Մկան Զատե, Օսմանյան հետափոխության մուր Էջերը և Թթվիհատի հայացինց ծրագրերը: Ե., 1990, էջ 34:

³ Տես Ռ. Մ. Կարգիզով. Ասսիրիйցի страны Ближнего и Среднего Востока. Первая четверть XX века. Е., 1979, с. 21–22, 24–25; Комбриг Հ. Կորսոն. Սարկամայական օպерація на Кавказском фронте мировой войны в 1914–1915 годы. М., 1937, с. 5, 7–8.

⁴ Տես Հայաստանի Հանրապետության պետական կենտրոնական պատմական արխիվ (այսուհետև՝ ՀՀ ԿՊՊ), ֆ. 45, ց. 1, գ. 2, թ. 25 (մերժագիր օրինակ):

⁵ Օսմանյան Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Սորգենթաուն հուշագրում է. «Օր մը «Գերեն» Վուախոր ելավ, ուսւ դեսպանատութին դեմք կանգ առավ և խարիսխ նետեց: Սպաները և նախապները կամքակի վրա շարվեցան, թշնամի դեսպանի ճիշտ դեմքը: Հանդիսավորապես հանեցին ի-

Օսմանյան նավատորմը և ամբողջ յամաքային բանակը գտնվում էին գերմանացիների հսկողության տակ: Դեռևս 1913 թվականից օսմանյան վիճակած ուժերի մարզումը իրականացնում էր գեներալ Լիման ֆոն Զանդերսի ռազմական առաքելությունը: Թուրքիան իր ամբողջ սպառավիճությունը ստանում էր Գերմանիայից: Օսմանյան բանակը վիճակած էր հիմնականում գերմանական արտադրության 7,65 մմ տրամաչափի ակոսավոր ու պահունակավոր «Մաուզեր» սիստեմի հրացաններով: Կայսրությունում հաշվում էր 1,5 միլիոն հրացան⁶:

Օսմանյան Թուրքիայի ռազմավարական ծրագրով նախատեսվում էին երկու հիմնական օպերացիոն ուղղություններ՝ կովկասյան և եգիպտական: Առաջինը համապատասխանում էր երիտրուքերի պանխազմական, իսկ երկրորդը՝ հիմնականում պանթուրքական պլաններին:

Եգիպտական ուղղությամբ անգլիացիների դեմ նախաձեռնվող հարձակումը նպատակ ուներ գրավելու Մեծ Բրիտանիայի համար կենսական նշանակություն ունեցող Սուեզի ջրանցքը, ապա Եգիպտոսը և Հյուսիսային Աֆրիկան⁷:

Վերը հիշատակված ռազմավարական պլանի և օպերացիոն ուղղությունների հենինակը Օսմանյան Թուրքիայի թենց ֆեսերը և անոնց տեղը գերմանական գոակների դրիմի: Նվազախումը նվազեց «Deutschland über alles», «Wacht am Rhein» («Գերմանիա ամեն բան վեր», «Պահպանություն Հռենոսի վրա») և ուղիշ ազգային երգեր ... Սեկ-երկու ժամ ատանկ ցայցանկազ մը հրամցնելով՝ ետք դժբախտ Գրիպ (Մ. Ն. Գրիպ 1913–1914 թթ. և լի է Ռուսաստանի դեսպանը Թուրքիայում – Ռ. Ա.), սպաները և նախավերը հանեցին գերմանական գոակները և լրիկն դրեցին իրենց ֆեսերը (տես «Ամերիկյան դեսպան Հենրի Սորգենթաունի հուշերը և հայկական եղենին գաղտնիքները»: Ե., 1990, էջ 69):

⁶ Տես Ա. Բ. Ժյու. Վինտովկի և ավտոմատ. Մ., 1988, ս. 51; Ա. Օ. Արդյունյան. Կավկազի ֆրոնտ 1914–1917 թ. Ե., 1971, ս. 126. 1914 թ. օգոստոսից հիշտեմբեր ընկած ժամանակահատվածում Թուրքիա ժամանեցին շուրջ հինգ հազար գերմանացի սպաներ, վիճակուներ ու նախատիւներ (տես Ե. Ղ. Մարգարյան, Թուրքիան և նրա նվազական քաղաքականությունը Անդրկովկասում (1914–1918): Ե., 1964, էջ 182):

⁷ Տես Ա. Հ. Հարությունյան, նշ. աշխ., էջ 126:

ուազմական նախարար Էնվեր փաշան էր: Գերմանացիները, որոնք մասնակցել էին այս պլանի մշակմանը, քաջ գիտնալորդ իրենց դաշնակցի տնտեսական ներուժը և նրա բանակի մարտական պատրաստականության մակարդակը, նախապես առաջարկում էին չդիմել հարձակողական գործողությունների, այլ նահանջել Սվապ (Մերաստիա)⁸ և ոռուսներին հրահրել ակտիվ գործողությունների: Բայց Էնվերին հաջողվեց համովել գերմանացիներին և ձեռնարկել իր պլանի իրականացմանը⁹, չնայած գերմանացիների առաջարկած տարբերակն ավելի իրատեսական էր, քանի որ ոռուսները չէին նախատեսում ձմռանը ակտիվ մարտական գործողություններ վարել:

Ոռուսների դեմ թուրքական հրամանատարությունը իր 800-հազարանոց բանակից կենսորուացրեց 3-րդ բանակը, թվով 300 հազար վիճակով ու սպա: Բանակը բաղկացած էր երեք կորպուսից՝ 9-րդ, 10-րդ և 11-րդ: 9-րդ կորպուսը տեղաբաշխված էր Էրվորումում, 10-րդը՝ Երզունկայում, իսկ 11-րդը՝ Վանուում: Կային մեկ հեծելազորային դիվիզիա, չորս ու կես քրդական հեծյալ և երկու տօտանձին դիվիզիաներ: Դիվիզիաներից յուրաքանչյուրը բաղկացած էր երեք հետևակային և մեկ հետևանային գնդերից: Գնդի կազմում կար երեք գումարտակ, իսկ մեկ գումարտակում՝ երեք հետևակային վաշտ: Հրետանային գնդերն ըստ պառապինված էին նաև լեռնային թընդանոթներով¹⁰:

Թուրքական հրամանատարությունը, ըստ ոռուսական հետախուզության տվյալների, զորակոչել էր 130 հազար քրդերի: Քրդական հեծելազորի հրամանատար էր նշանակվել Սելիմ փաշան¹¹:

⁸ Տես «Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը...», էջ 156:

⁹ Տես W. E. D. Allen, P. Muratoff. Caucasian Battlefields: A History of the Wars on the Turco-Caucasian Border, 1828–1921. Cambridge, 1953, p. 250.

¹⁰ Տես «Հայ ժողովոյի պատմություն», հ. 6: Ե., 1981, էջ 538–539, Ա. Հ. Հարությունյան, նշախ., էջ 130:

¹¹ Տես Ա. Հ. Հարությունյան, նշ. աշխ., էջ 130–131:

Կովկասյան ճակատում մարտական գործողություններն սկսվելուց հետո քրդերը սպառնալիք դարձան ոռուսական զորամասերի պարեկային խմբերի և համբարակային ստորաբաժանումների համար: Բանն այն է, որ նրանք լավ ծանոթ էին տեղանքին, գիտեին այն շրջաննիկ ճանապարհներն ու արահետները, որոնք նշված չէին տեղագրական քարտեզներում: Նրանք նաև օսմանյան զորքերի առաջապահ ուժերն էին¹²:

Ոռուսական զորքերը տեղաբաշխված էին ոչ միայն ոռուս-թուրքական սահմանի ողջ երկայնքով, այլև Պարսկաստանի հյուսիսում՝ Ուրմիայում, Խոյում, Դիլմանում և Թավրիզում: Մարտական գործողություններն սկսվելուց հետո Պարսկաստանի հյուսիսում գտնվող զորամասերն ուժեղացնելու համար կազմական առաջին կամավորական ջոկատով: Մրանցից կազմվեց մի զորախումբ, որը կոչվեց Ադրբեջանյան ջոկատ, նրա հրամանատարն էր գեներալ Ֆ. Գ. Զեռնովուրովը¹³:

Երբ ոռուսները Արևելյան ճակատում սկսեցին մարտական գործողությունները ավատրունգարական և գերմանական բանակների դեմ, Կովկասյան ռազմական օկրուգից այնտեղ տեղափոխվեցին 2-րդ և 3-րդ բանակային կորպուսները, Երևանյան և Վրացական գնդերը: Գեներալ Թ. Հ. Նազարբեկովը բացահայտ էր գնահատում գլխավոր հրամանատարության այս որոշումը: Նրա կարծիքով ավելի նպատակահարմար էր թողնել այդ ուժերը տեղում: Իր կարծիքը գեներալը հետևյալ կերպ էր հիմնավորում: այդ կորպուսների և գրնդերի անձնակազմերը «ծանոթ էին Կովկասյան ռազմաճակատին (ապագա մարտական գործողությունների թատերաբեմին – Ա. Ս.) և վարժեցվել էին լեռնային պատերազմում գործելուն, բայց այդ, երկու կորպուսներում էլ կային 77 թվականի պատերազմի (1877–

¹² Տես ՀՀ ՊՊԱ, ֆ. 121, գ. 1, թ. 21–22:

¹³ Տես նույն տեղում, ֆ. 45, գ. 1, թ. 1, թ. 12–13:



Անդրանիկ Օգանյան

1878 թթ. ոռուս-թուրքական պատերապմի-Ռ. Ա. Մասնակիցներ»¹⁴:

Նման պայմաններում առկա ուժեղով՝ 75,2 գումարտակ, 114 հարյուրյակ և 204 թնդանոթ, հնարավոր չէր պետական սահմանը արդյունավետ պաշտպանել: Միայն Կովկասի փոխարքա Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի համար պնդումներից հետո տարածաշրջան տեղափոխվեց Թուրքիայի 2-րդ կորպուր, և ակսվեց նոր զորամասների կազմակորումը: Այս բոլոր համարումներից հետո Կովկասյան ուսպմական օկրուգն ուներ 153 գումարտակ, 175 հարյուրյակ, 350 դաշտային թնդանոթ և քերդային հրետանու 5 գումարտակ: Այս զորամասների կազմում գործում էին տարբեր ժամանակներում ձևավորված հայ կամավորական ջոկատներ, որոնք իրենց կազմով համապատասխանում էին հետևակային գումարտակին: Գեներալ Նազարբենկովը գրում է. «Այդ դրուժինաների գլուխ կանգնեցին սիրելի առաջնորդները՝ 1-ինինը՝ Անդրանիկը, 2-րդինը՝ Դրոն (Դրատումատ Կանայան-Ռ. Ա.), 3-րդինը՝ Համապատասքը (Մրգանձտյան-Ռ. Ա.) և 4-րդինը՝ Քեռին (Արշակ Գաֆավյան-Ռ. Ա.): Կամավորական ջոկատների վաշտերում

¹⁴ Նույն տեղում, թ. 5-6:

կային 250 հետևակային և 10—15 հեծյալ: Որոշ ստորաբաժանումներում հեծելավորն առանձին էր»¹⁵:

Կովկասյան ուսպմական օկրուգի հրամանատարությունն իր ննթակայության ներքո գտնվող զորքերը բաժանել էր հինգ խմբի: Նրանցից յուրաքանչյուրը բաղկացած էր առանձին ջոկատներից: Խմբի կամ ջոկատի հրամանատարն էր առավել խոշոր զորամիավորման, օրինակ՝ դիմիսիայի հրամանատարը: Ամենամեծը Սարիդամիշյան ջոկատն էր, որը կազմված էր Կովկասյան 1-ին բանակային կորպուսից: Նրա հրամանատարն էր գեներալ-լեյտենանտ Գ. Է. Բերխմանը: Այս ջոկատի կազմում գործում էին երեք, ըստ մեկ այլ աղյուրի՝ երկու¹⁶ ջոկատ՝ Սարիդամիշյան, Օլթիի և Կապովանյան:

Սարիդամիշյան իմբրավորման առջև դրված էր հետևյալ մարտական խնդիրը՝ հարձակվել Բասենի դաշտի ուղղությամբ՝ նպատակ ունենալով շախահեղությունը արևելքից պաշտպանող թուրքական ուժերը: Օլթիի ջոկատը պետք է աջակցեր Սարիդամիշյան ջոկատի հարձակմանը՝ պաշտպանելով նրա աջ թևը: Կապովանի ջոկատը շարժվելու էր Ալաշկերտի հովտով՝ նպատակ ունենալով մասնատելու հակառակորդի Երկրույան և Բայազետյան խմբավորումները:

Իր ակտիվ հարձակողական գործողություններով Սարիդամիշյան խմբավորումը պիտք է Կովկասի տարածքը պաշտպանել թշնամու ներխուժումից: Երևանյան, Մակուի և Ադրբեյչանյան ջոկատները պիտք է պաշտպանեին Անդրբեյչանը և Պարսկաստանի հյուսիսային մասը: Երևանյան ջոկատը պիտք է շարժվեր դեպի Վան:

Տուսական զորքերի երրորդ խմբավորումը կոչվում էր Բայթումյան: Այն բաղկացած էր Բաթումյան և Ճորիսյան ջոկատներից: Այս խմբավորումը պետք է իրականացներ ուսպմաճակատի աջ թևի ուսպմակարական պաշտպանությունը:

Չորրորդ ջոկատը պաշտպանում էր

¹⁵ Տե՛ս Ա. Հ. Հարությունյան, Խօ. աշխ., էջ 132—133, ՀՀ ՊԿԱ, ֆ. 45, գ. 1, թ. 14—15:

¹⁶ Տե՛ս ՀՀ ՊԿԱ, ֆ. 121, գ. 3, թ. 1:



Քենի, Համազասպ, Վարդան

Էնգելի—Ձեերան խճուղային ճանապարհը և պարսկական սահմանագիծը:

Հինգերորդ խմբավորումը Կովկասյան ռազմաճակատի պահեստավորն էր, որը միաժամանակ պետք է պաշտպաներ թիկունքը և փոխարքայության կենտրոն Թիֆլիսը¹⁷:

Գեներալ Չեռնովուրովի Ադրբեջանյան ջոկատի առջև դրված էր ոչ միայն մարտական, այլև քաղաքական խնդիր՝ Ռուսաստանի հսկողության ներքո պահել Հյուսիսային Պարսկաստանի բնակչությանը, հատկապես թուրքամետ տրամադրություններ ունեցող քրդական աշհոեթներին¹⁸:

¹⁷ Տես Ա. Հ. Հարությունյան, Խ. աշխ., էջ 133—134:

¹⁸ Տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 45, ց. 1, գ. 1, թ. 5—6:

Ինչպիս ցույց տվեց հետագայում ծավալված մարտական գործողությունների ընթացքը, ոռւսական ուժերի ջոկատային կառուցվածքն իրեն շարդարացրեց, ուստի և 1915 թ. կեսերից ոռւսական հրամանատարությունը որոշում ընդունեց վերադառնալու գորամիավորումների նախկին կառուցվածքին՝ գունդ, դիվիզիա, կորպուս:

Թուրքական Յ-րդ բանակի օպերատիվ պլանով նախատեսվում էր ոչ ընչացանել Սարիդամիշ քաղաքի մոտ տեղաբաշխված ոռւսական գլխավոր ուժերը, ապա գրավել Արդահանը, Բաթումը, այնուհետև Բաքուն և այլ տարածքներ: Օսմանյան գորքերը պետք է ճեղքին ոռւսական ուժերի սարիդամիշյան աջ թևը, ապա շրջանցող խոր

գորաշարժի միջոցով դուրս գային նրա թիկունք՝ Կարսից արևելք¹⁹:

1914 թ. հոկտեմբերի 29–30-ը գերմանաթուրքական ռազմածովային նավատորմը ծովակալ Սուշոնի հրամանատարությամբ ուժը կոծեց Աևաստոպոլը, Նովոռոսիակը և Թեոդոսիան: Հակառակորդին հաջողվեց ջրասույզ անել ռուսական ռազմական ու քաղաքայիշական միքանի նավ և վնասել ափամերձ շինություններին:

Ցամաքում մարտական գործողությունները սկսվեցին 1914 թ. նոյեմբերի 1-ին: Ռուսական զորքերն անցան պետական սահմանը և խորացան հակառակորդի տարածքը:

Հյուսիսային Պարսկաստանում գործող գեներալ Չեռնովուրովի ուժերը գրավեցին ռազմավարական նշանակություն ունեցող լեռնանցքներ ու ճանապարհներ²⁰:

Սարիդամիշյան ջոկատը գեներալ Բերխմանի գլխավորությամբ կարողացավ հեշտությամբ գրավել Քյոփհիքոյը, որը գտնվում էր Էրքումից 35 կմ հեռավորության վրա: Սակայն նման հանպատրաստից առաջխաղացումը տեղին չէր, քանի որ մենք ջոկատի ուժերով հրնարավոր չէր զարգացնել հարձակումը: Գեներալ Բերխմանը հաշվի չէր առել, որ հակառակորդը հնարավորություն ունի Էրքումից արագործն զորքեր տեղափոխելու և հակահարված տալու: Բայց այդ, խիստ դժվար էր ապահովել Սարիդամիշյան ջոկատի մատակարարումը²¹:

Օսմանյան 3-րդ բանակի 9-րդ և 11-րդ կորպուսների ձեռնարկած հարձակումը դրա հաստատումը նույնի Ռուսները հարկադրված էին նահանջելու, հակառակ դեպքում նրանց սպառնում էր աջ թևից ջրանցքը: Ռուսությունը նախընտրեց 1914 թ. նոյեմբերի 16-ին թողնել Քյոփհիքոյը²²:

¹⁹ Տես Ե. Ղ. Սարգսյան, նշ. աշխ., էջ 188:

²⁰ Տես ՀՀ ՊԿՊ, ֆ. 45, գ. 1, գ. 1, թ. 13–14:

²¹ Տես նույն տեղում, ֆ. 121, գ. 1, գ. 3, թ. 4:

²² Թուրքական մամուլը շտապեց ազգարարել յուրացիների տարած «փայլուն» հարթանակը: Կ. Պոլսում լույս տեսնող «Թանին» թերթը 1914 թ. նոյեմբերի 27-ին գրել է. «Թուրքական սպանծակի զորքերի... հաղթանակը ոչ միայն քաջության, այլև արքայի քաջագույն մի նմուշ է... մեր խիստան զորքերը դեն շարտեցին ռուսական բանակը և իրենց փայլուն հաջողությամբ սրբացին նախորդ պարտությունների ամորթակը» (տես Ե. Ղ. Սարգսյան, նշ. աշխ., էջ 189):

Սարտավարական առումով այս հաջորդթյունը Էլ ավելի վատահություն ներշնչեց Էնվերին: Նա ննթադրում էր, որ հասել է հակառակորդին ջախջախիչ հարված հասցնելու պահը:

Արդահանի ուղղությամբ գործող գեներալ Ն. Մատոմինի ջոկատը, որը Սարիդամիշի ջոկատը պաշտպանում էր իյուսիս-արևմտադրից, դիրքեր գրավեց Արդաստ-իդի ուղղությամբ:

Կովկասյան 4-րդ կորպուսի գորամասերը մարտեր էին մղում քրդական ստորաբաժանումների և թուրքական զորքերի դեմ՝ պաշտպանելով Սարիդամիշյան ջոկատը ձախ:

Բաթումի ուղղությամբ գերմանացի մայոր Շտանգենի թուրքական զորաշոկատին հաջողվեց ռուսների համար անրսապասելիորեն դեսանու իջնցնել և գրավել Արդվինն ու Արտանուջը: Հակառակորդին հաջողվեց բնագծեր գրավել Աշարիածղալի գետի երկայնքով: Թուրքական հարձակման հաջորդությանը մեծապես նպաստում էր աջար բնակչության բարձրացած հակառական ապատամբությունը:

Մարտերի արդյունքը եղավ այն, որ 1914 թ. դեկտեմբերի 9-ի դրությամբ Կովկասյան բանակի աջ թևը հետ մղիցել Բաթում:

Օսմանյան զորքերն իրենց հաջողությունը «նշանավորում էին» տեղի բնակչության, այդ թվում և հայերի, կողոպուտով և զանգվածային կոտորածներով²³:

Արքեցած մարտավարական նշանակություն ունեցող հաղթանակով՝ Էնվերի փաշան անուշադրության էր մատնում մարտական գործողությունների հետևանքով իր զորքերի օր օրի աճող կորուստները: Մինչդեռ 3-րդ բանակի կորուստները հաշվում էին 15000 մարդ,

յիմբերի 27-ին գրել է. «Թուրքական սպանծակի զորքերի... հաղթանակը ոչ միայն քաջության, այլև արքայի քաջագույն մի նմուշ է... մեր խիստան զորքերը դեն շարտեցին ռուսական բանակը և իրենց փայլուն հաջողությամբ սրբացին նախորդ պարտությունների ամորթակը» (տես Ե. Ղ. Սարգսյան, նշ. աշխ., էջ 189):

²³ Տես ՀՀ ՊԿՊ, ֆ. 276, գ. 1, գ. 159, թ. 1:

այդ թվում 3000 դասավիք, իսկ ոռւսների կորուստները՝ 6000 մարդ²⁴:

Ձուրբական հրամանատարությունը մշակեց հետագա գործողությունների երկու տարրերակ: Առաջինը նախատեսում էր հարված Դեմի-բարայի ուղղությամբ և ոռւսական զորքի ձախ թերթ և թիկունքի շրջառում: Երկրորդ տարրերակով օսմանյան ուժերը պիստը է գրոհենին հակառակորդի աջ թերթ ու թիկունքի վրա՝ շրջապատելով ու ոչնչացնելով նրան, որից հետո դուրբությամբ կդրավեն Սարիդամիշն ու Կարսը: Ենվերը նախընտրեց երկրորդ տարրերակը, որով նախատեսվում էր շրջանցիկ խոր զորաշարժ:

Ենվերը հրամայեց 9-րդ և 10-րդ կորպուսները կենտրոնացնել Էրկրում—Սարիդամիշը ուղղությամբ: 3-րդ բանակի հրամանատար Հասան Իվեր փաշան, որն ավելի սրափ էր գնահատում իրադրությունը, փորձեց օսպմական նախարարին հետ պահել՝ վկայակոչելով իրենց ուժերի անբավարար մատակարարումը: Զիանդութենով նման կարծիքը՝ Ենվեր փաշան նրան հեռացրեց 3-րդ բանակի հրամանատարությունից և վճռեց անձամբ գլխավորել Սարիդամիշյան օպերացիան իրականացնող ուժերը:

1914 թ. նոյեմբերի 11-ի գրությամբ թուրքերը գրավել էին Արդվինն ու Արտանուջը, իսկ 11-րդ կորպուսն իր ակտիվ հարձակողական գործողություններով Սարիդամիշյան ջոկատին հարկադրել էր վարել միայն պաշտպանական մարտեր: 9-րդ և 11-րդ կորպուսների առջև դրված էր մարտական առաջադրանք՝ ճեղքել ոռւսների պաշտպանությունը Օլթիից հարավ-արևմուտք, ապա ձախ թերթ շրջանցել Սարիդամիշյան ջոկատը: Հարձակման գլխավոր ուղղությամբ թուրքերը կենտրոնացրել էին 90 հազար զինվոր, իսկ ոռւսներն ունեին ընդամենը 60 հազար²⁵:

Ըստ Ենվերի ծրագրի շրջանցիկ հարվածը պետք է հասցեր ոռւսների համար

²⁴ Տես Ա. Հ. Հարությունյան, նշ. աշխ., էջ 140:

²⁵ Տես Բիրկադրի հրամանատար Ն. Կորսուն, նշ. աշխ., էջ 19:

անսպասելի ու սրբնթաց, որպեսպի նըրանք ի վիճակի շինեին լուրջ դիմադրություն կազմակերպելու:

Օպերացիայի արագընթացությունն ապահովելու և հարձակման տեմպերը պահպանելու նպատակով Էնվերը վճռեց հրամադրելով ողջ գումակից, իսկ 9-րդ կորպուսում թողնել միայն լեռնային հրետանին: Նախատեսվում էր պարենն ու անանակերը հայթայթել տեղի մահմեդական բնակչության օգնությամբ:

1914 թ. դեկտեմբերի 11-ին Ենվեր փաշան վերջնականացնելու ընտրեց հարձակման գլխավոր ուղղությունները: 9-րդ կորպուսը գրոհելու էր Բարդուս—Սարիդամիշը ուղղությամբ, իսկ 10-րդը՝ 9-րդից ձախ՝ դուրս գալով Սարիդամիշից հյուսիս:

Ձուրբական գործերը հարձակվում էին և՛ Սարիդամիշից, և՛ Օլթիի ուղղությամբ: Օլթիի ջոկատի հրամանատար գեներալ Խստոմինը շրջապատումից խուսափելու նպատակով մկնեց նահանջել դեպի Բարդուս գյուղը և համանուն լեռնանցը՝ Օլթիից հյուսիս:

Պարզ դարձավ, որ հակառակորդի հետևակի մեծաքանակ ուժերը շարժվում են ուղիղ դեպի Սարիդամիշ առավել թույլ պաշտպանված Բարդուսի տեղամասով: Ռազմակատի այս հատվածը պաշտպանում էին միայն Կարսի սահմանապահ 26-րդ բրիգադի հեծյալ և հետևակային ուժերը:

Հակառակորդի ճնշումը թուլացնելու նպատակով գեներալ Քերիմանը վճռեց հարձակում Ճեռնարկել և գրավել Քյոփիրիքյ տանող անցումը և Հասան-Կալեն՝ անմիջական սպառնալիք ստեղծելով Էրկրումի համար, հույս ունենալով, որ Կիարլազդրի հակառակորդին նահանջելու: Օլթիից: Սակայն Կովկասի փոխարքայի ռազմական օգնական գիներալ-ինյետնանուն Ա. Զ. Միջլանսկին, որը նոր էր ժամանել ռազմաճակատ, հրամայեց դադարեցնել գործողությունը՝ գրտելով, որ ավելի մեծ է ոռւսական զորքերի աջ թերթ սպառնացը²⁶:

Գեներալ Միջլանսկու հրամանները նպատեցին թուրբական լայնածավալ

²⁶ Տես ՀՀ ՊԿԱ, ֆ. 121, գ. 1, գ. 3, թ. 6–8:

հարձակմանը և է՛լ ավելի խճճեցին դրությունը ռազմածակատում: Նա, ըստ է՛ռության չկարողանալով ճիշտ գնահատել ստեղծված օպերատիվ իրադրությունը, չհամարձակվեց օպերատիվ շուաբը Թիֆլիսից տեղափոխել Կարս, որտեղից դյուրին կիներ իրականացնել կովկասյան զորքերի ղեկավարումը: Նըրաւ իրամանով գեներալ Զեռնովութովի իրամանատարության ներքո գտնվող Ալբերտայի ջոկատը, որը հաջող մարտական գործողություններ էր վարում Հյուսիսային Պարսկաստանում, նահանջեց Թավրիզից և Ուրմիայից ու նոր բնագծեր գրավեց Ջուլֆա—Խոյ ուղղությամբ²⁷:

Նապարբեկովն իր հուշերում վկայում է, թե ինչ ընկճվածություն առաջացրեց այդ իրամանը իր իրամանատարության ներքո գտնվող զորքերում, հատկապես հայ կամավորների շրջանում: Գեներալը գրում է. «Ես կանչեցի Յակով Քրիստոֆորովիչ Զավրիևին (Հակոբ Զավրիև, հայ քաղաքական և պետական գործիչ, Հայկական 1-ին կամավորական ջոկատի բժիշկ—Ռ. Ա.) և ծանոթացրի հեռագրի բովանդակությանը: Նա այն աստիճան վշտացել էր այդ լուրով, որ նրա աշքերում արցունքներ հայտնվեցին: Ես սկսեցի նրան հանգըստացնել և ասացի, որ առաջմ չպետք է հուսահատվել: Դրան նա պատասխանեց, թե ինչպես չվշտանա, եթե ինքն իր ողջ կյանքը ի ապաս է դրել հայ ժողովրդի ազատագրմանը, և այժմ ամեն ինչ կործանվում է: Հատկապես ճնշված տրամադրություն ունեին Անդրանիկը, նրա օգնականները և դրուժինները: Նըրանք թափառում էին ինչպես ստվերներ և չգիտեին ինչ ձեռնարկելը²⁸:

Կովկասյան ռազմածակատի իրամանատարությունը հանձին շտաբի պետ գեներալ Ն. Ն. Յուդենիչի, բայց հայտելով հակառակորդի հարձակման օպերատիվ պլանի էությունը, սկսեց ըս-

տապ Սարիղամիշ ուղարկել հետևակային, հեծելազորային ու իրետանային ըստորաքածանումներ: Ռուսները ստանում էին համալրում: Նույնը չի կարելի ասել օսմանյան 3-րդ բանակի մասին, իսկ թուրքական կորուստներն օրենքոր ավելանում էին: Դրա պատճառը ու միայն մարտական գործողություններն էին, այլև իսկամ սառնամանիքներն ու ձնաբուքերը: Այդ ամենին զումարվեցին տիֆը, դիվենտերիան, ժանտավատը: Այսպիսի, թուրքական 17-րդ հետևակային դիվիզիան կորցրեց իր անձնակազմի 50 տոկոսը, իսկ 32-րդ հետևակային դիվիզիայի 13000 զինվորներից կենդանի մընացին միայն 7000-ը²⁹: Նապարբեկովը նկատում է. «Զարմանալի է, թե ինչպես այդ հանգամանքը (դաժան ձմեռը—Ռ. Ա.) թուրքերն անուշադրության էին մատնել՝ լավ իմանալով երկրի կիմմայական պայմանները»³⁰:

Ակնհայտ է, որ նման պայմաններում հնարավոր չէր շարունակել հարձակումը, սակայն Սարիղամիշի օպերացիայի հեղինակ Ենվեր փաշան, ոգևորված Քյոփիրիյոյի, Թավրիզի ու այլ տարածքների գրավմամբ և ոռւսական զորքերի նահանջով, վճռականորեն տրամադրության էր շարունակելու հարձակումը: Օսմանյան թուրքիայի ռազմական նախարարի որոշումը կործանարար եղավ թուրքական 3-րդ բանակի համար:

1914 թ. դեկտեմբերի 12-ին Ենվեր փաշան հրամայեց սկսել հարձակումը Սարիղամիշ քաղաքի վրա: Նրա մարտական իրամանը ավարտվում էր հետևյալ խոսքերով. «Եթե ռուսները փորձեն կըռվել, նրանք կլործանվեն»³¹:

Ցրտից, վարակիչ իիվանդություններից և մշտական թերասնումից տառապող զինվորներին ոգևորելու նպատակով ռազմական նախարարը կոչ էր հղում նրանց. «Զինվորներ, ես ձեզ բոլորիդ այցելեցի: Տեսա, որ դուք ոտարու-

²⁷ Գեներալ Նապարբեկովը այդ իրամանը բնորոշեց որպես «աննպատակ նախանք» (ՀՀ ՊԿԱ, ֆ. 45, ց. 1, գ. 2, թ. 1):

²⁸ Նույն տեղում, ց. 1, թ. 40-41:


²⁹ Տես Բրիգադի իրամանատար Ն. Կորսուն, նշ. աշխ., էջ 52-53:

³⁰ Տես ՀՀ ՊԿԱ, ֆ. 45, ց. 1, գ. 1, թ. 41:

³¹ Տես ՌԻ. Շ. Ալեքս., Պ. Մուրասով, նշ. աշխ.,

էջ 258:

ՄԱՐԴԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍԻԱՑ ԽԱԶԱՏԱԿԱՆՈՒՄ. ՄԱՐԴԱԿԱՆԻ ՕՊԵՐԱՑԻՈՆ



Մարդամիշյան օպերացիայի քարտեզը
(«Բոլյարդական էնցիկլոպեդիա» Մ., 1955, թ. 38 գրքից)

բիկ եր, խակ ձեր ուսերին շինելներ չկան: Մակայն մեր դիմաց կանգնած թշնամին վախենում է մեղնից: Շուտով դուք կակրսներ հարձակվել, կմտներ Կովկաս: Այսուհետ դուք կգտներ ամեն տեսակի մժերը

և հարստություն: Մահմեդական ողջ աշխարհը հույսով նայում է ձեր վերջին ճիգերին³²: Էնիբրը հուսադրում էր յուրա-

³² Տես Հ. Դ. Մարգար, Խ. աշխ., 1.9 1915:

յիններին՝ ասելով. «Մեր պարենի բառն մեր առջևում է»³³:

Գեներալ Բերիմանի Սարիղամիշյան ջոկատի դեմ գործում էին 9-րդ և 11-րդ կորպուսները, երկու հեծելազորային դիվիզիա, երեք սահմանապահ գումարտակ ու քրդական ստորաբաժանումներ³⁴:

Օսմանյան զորքերը, ապահովված չիններով ամենատարրական տար հանդերձանքով, կորցրեցին զգալի թվով մարդկանց, որի հետևանքով ընկալ վիճակուների մարտունակությունը, մեծացավ դասախրների թիվը: Ռուսական զորքը, ի տարբերություն իր հակառակորդի, համեմատաբար լավ էր ապահովված տար հագուստով³⁵:

1914 թ. դեկտեմբերի 14-ին ռուս բանակային հետախույզներին հաջողվեց գերել թուրքական 29-րդ դիվիզիայի շտաբի պետին: Նրա մոտ գտնվեց «Սարիղամիշ» օպերացիայի պլանը: Դա ռուսական հրամանատարությանը թույլ տվեց մանրամասնորեն ծանրթանալու հակառակորդի օպերատիվ պլանին:

Բայց փոխանակ օգտվելու թուրքական օպերատիվ պլանից Կովկասի փոխարքայի ռազմական օգնական Միջանկին շտապնակ 1914 թ. դեկտեմբերի 15-ին լրել Սարիղամիշը նույնական առանց տեղյակ պահելու բանակի շտաբի պետ գեներալ-մայոր Յուդենիշին և ուղղվեց Թիֆլիս: Միջանկի անսպասելի հայտնըվելը Թիֆլիսում ահավոր խուճապ

³³ Տես Ռ. Է. Գ. Աղեն, Պ. Սուրառով, Խ. աշխ., էջ 253:

³⁴ Տես Բրիգադի հրամանատար Ն. Կորուն, Խ. աշխ., էջ 72:

³⁵ Դանա 1914 թ. հոկտեմբերին հայ կամավորական 4-րդ ջոկատի հրամանատար Բենին Ձեթֆիխի հայոց ազգային խորհրդին տված հետագույն խորհրդում էր շտաբ կարգով ջոկատին ուղարկել բուրքը և պետնականեր, քանի որ «առանց դրանց մարդիկ կկործանվեն» (տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 2, գ. 30, թ. 3): Իր հուշերում Նազարբեկինը նշում է այն փաստը, որ երբ ինքն ատացավ նշանակում Աղրբեշանյան ջոկատում, գեներալ-իշտանանան Միջանկին առաջին հերթին իրեն խորհրդու տվեց վերցնել տար հագուստ, «քանի որ հարկադրված են լինելու ձմռանձան ձևոնածածկ լևոնանցրներով հարձակվելու Վասի վրա» (տես ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 45, գ. 1, թ. 9-10):

առաջացրեց փոխարքայության մայրաքաղաքում, ինչպես նաև ողջ ռազմաճակատում: Իր փախուստի ճանապարհին Միջանկին հասցեն մի շարք անհեթեթ հրամաններ տալ: Այսպես, գեներալ Արայինի Երևանյան ջոկատին հրամայեց արագորեն: ապատեղ Ալաշկերտի հովիտը: Հրամանը կատարվեց, և ռուսական զորքի հետ հեռանալ չհասցրած հայ բընակչությունը թուրքերի կողմից կոտորածի ենթարկվեց: Միայն 4-րդ կորպուսի հրամանատար գեներալ Օգանովսկին ջատարեց Միջանկու հրամանը՝ նահանջել ընդհուպ մինչև Երևան—Աղրատաֆա: Բանն այն է, որ Օգանովսկին չէր տեսնում իր առջև կանգնած թուրքական 36-րդ և 37-րդ հետևակային դիվիզիաների կողմից որևէ ճնշման վըտանգ: Այդ զորամասերը տեղափոխվել էին Միջագետքից, նրանց անձնակազմը բաղկացած էր արաբներից, որոնք սովոր չէին կռվելու կիմայական և ոելինքի նման պայմաններում:

1914 թ. դեկտեմբերի 14-ին օսմանյան 9-րդ կորպուսի զորքերը իրետանու և գնդացիրների կրակի ներքո հարձակման անցան Սարիղամիշ քաղաքի պաշտպանական դիրքերի վրա:

Ռուսներին հաջողվել էր Սարիղամիշի շրջանում կազմակերպել ամուր պաշտպանական դիրքեր: Նրանք, մարտեր մղելով հակառակորդի դեմ, թուրացնելով նրան, վկացին թուրքերի աջ և ձախ թեների օդակումը:

1914 թ. դեկտեմբերի 16-ին գեներալ Բուկրետովի ջոկատը և 15-րդ Թուրքեատանյան հրաձգային գունդը կատաղի մարտերից հետո գրավեցին Բարդուլունը: Նույն օրը հաջողությամբ հետ մղեցին Սարիղամիշի արվարձաններից թուրքերի ձեռնարկած գրոհը:

Թուրքերի հարձակման թափը բավականին ընկել էր: Հակառակորդի 9-րդ բանակային կորպուսին ծանր հարված հասցվեց. գեներալ Բուկրետովի ջոկատին հաջողվեց գրավել Բարդուլու կապար թիկունքի հետ:

Հնայած այն հանգամանքին, որ մարտավարական նախաձեռնությունն անցել էր ոռւսներին, գեներալ Բերիմանը, չկարողանալով ճիշտ գնահատել դրությունը, վճռեց նահանջել դեպի Կարս: Նրա որոշման կատարման դեպքում թուրքական 11-րդ կորպուսը հնարավորություն կատանար կապ հաստատելու շրջապատման մեջ գտնվող 9-րդ կորպուսի հետ: Բայի այդ, թշնամին կրհայտնվեր գեներալ Ս. Ա. Պրժեսալսկու 1-ին Կուրքանյան պլատունյան բրիգադի թիկունքում: Մակայն, տեղի տալով գեներալ Յուդենիշի պնդումներին, Բերիմանը կրագրվեց իր ծրագրից:

Արդեն դեկտեմբերի 17-ի երեկոյան Սարիդամիշի համար մղված մարտերի ընթացքում գերվեցին երկու տասնյակ թուրք սպա և մոտ 1500 զինվոր³⁶:

1914 թ. դեկտեմբերի 18-ին և 19-ին գեներալ Յուդենիշի առաջապահ զորքերը հետ մղեցին հակառակորդի չորս հարձակումը, որոնցով թուրքները մտադիր էին առաջանարու դեպի Բարդուս (Յուդենիշի Բերիմանի փոխարքն նշանակվել էր Սարիդամիշյան ջոկատի հրամանատար):

Օսմանյան 11-րդ կորպուսի հրետանին հակառակորդի դեմ կիրառում էր «քոչող մարտկոյն ների» մարտավարություն: Բանն այն է, որ թուրքական հրետանավորները լուրջ կորուստներ էին ունենում ոռւսների դիապուկ հրետակոծությունից: Ուստի նրանք դիմում էին խոռոշանկության. թնդանորներից երկու արկ արձակելուց հետո արագործն տեղափոխվում էին այլ դիրք՝ հնարավորություն չտալով ոռւսներին ճշտորեն որոշերու իրենց նախապահման վայրը: Սակայն թուրքերը հաջիմ չէին առել մի կարևոր հանգամանք. այս մարտավարությունն արդյունավետ էր ցերեկը, իսկ գիշերը կրագրոցի արձակած բոցը մատնում էր թնդանոթի գտնվելու վայրը:

1914 թ. դեկտեմբերի 22-ին, հրետանային նախապատրաստությունից հետո, ոռւսական զորքերն անցան լայնածավալ հատուման: Թուրքական 9-րդ կորպու-

³⁶ Տես Բրիգադի հրամանատար Ն. Կորսուն, նշ. աշխ., էջ 96:

սը գլխովին ջախչախմբից: Գերվեց կորպուսի հրամանատար Խսիան փաշան իր շտաբով: Գեներալ Պրժեսալսկու ջոկատի վինդիրները Սարիդամիշի մոտ գտնվող անտառում գերեցին օսմանյան 17-րդ, 28-րդ և 29-րդ դիվիզիաների հրամանատարներին, 106 սպայի, գրավեցին 30 թնդանոթ, 20 գնդացիր և այլն³⁷:

9-րդ կորպուսի ջախչախումից հետո ոռւսական հրամանատարությունը վճռեց թույլ չտալ 10-րդ կորպուսին դուրս պըրծնել ջրջապատումից: Նրա դեմ մարտերը շարունակվեցին մինչև դեկտեմբերի 30-ը:

Իրադրությունը, սակայն, այլ էր Օլժիի շրջանում: Այստեղ այն թուրքական զորացուկառը, որի հրամանատարն էր գերմանացի մայոր Շտանգեն, ապահովելով թիկունքը Բաթումի և Կարսի հարավ-արևմտյան շրջանների ապրատամբ մահմեդականների աջակցությամբ, դեռևս 1914 թ. դեկտեմբերի 12-ին ջախչախեց ոռւսական ուժերը և գրավեց Արդահանը: Այստեղից հակառակորդին դուրս մղելու նպատակով ոռւսական հրամանատարությունը այս ուղղությամբ կենտրոնացրեց գեներալ Կալիտինի Սիբիրյան կազակային բրիգադը:

Օռւսական հետախուզությունը պարզեց, որ Արդահանը գրավելուց հետո թուրքերը որևէ ակտիվ մարտական գործորություն չեն նախատեսում: Ավելին, նրանք թույլ էին տվել կոպիտ սիազալ պարեկանականահան ծառայությունը վատահեկ էին քրդերին, որ, գեներալ Ն. Կորսունի բնորոշմամբ, հետագայում «թուրքերին կործանման հասցրեց»³⁸:

Օլժիի ջոկատի հրամանատար գեներալ Կալիտինին հրամայվեց ձեռընպահ մնալ որևէ գործողությունից և ըսպանել Սարիդամիշյան օվերացիայի ավարտին, որպեսզի Սարիդամիշյան ջոկատի հետ միահամանակ մկնեն Արդահանի գրուիր:

Օլժիի ջոկատի հարձակումը գաղտնի պահելու և առաջնաղացումը քողարկելու նպատակով աջ և ձախ թեկում ա-

³⁷ Տես Ա. Հ. Հայությունցան, նշ. աշխ., էջ 147:

³⁸ Բրիգադի հրամանատար Ն. Կորսուն, նշ. աշխ., էջ 118:



Գեներալ Ն. Վ. Չիչագով

(«Революция и гражданская война в описаниях белогвардейцев. Деникин, Юденич, Брангель», М., «Отечество», 1991 գրքից)

ռազ քաշվեցին կապակային հարյուրյակներ, որոնք մարտական առաջադրանք ունեին՝ ստիպել հակառակորդի առաջապահ ուժերին նահանջել: Թշնամին այնքան անհոգ գտնվեց, որ ուշադրություն չդարձրեց ոռւսների ակտիվացմանը: Դա էլ որոշեց նրա ճակատագիրը:

1914 թ. դեկտեմբերի 21-ի առավոտյան, հրետանու լրակի ներքո, սկսեց Արդահանի գրոհը: Ռուսները, օգտվելով ուժեղ մառախուղից, աննկատ մոտենացած թշնամու դիրքերին և անսպասելի գրոհեցին: Անակնկալի եկած թշնամին թույլ դիմադրություն ցույց տվեց, ծանր պարտություն կրելով՝ սկսեց նահանջել: Սակայն ռուսական ուժերը հակառակորդին հետապնդելու և նրան գլխովին ջախջախելու փոխարեն նախընտրեցին մնալ Արդահանում: Դեկտեմբերի 23-ին բանակի շտաբից ստացված հրամանը՝ հետապնդել թշնամուն, արդեն ուշացել էր: Շուանգի ջոկատը անարգել հասավ Արդվին:

1914 թ. դեկտեմբերի 24-ին գեներալ Յուդենիչը հրամայեց սկսել հարձակումը Օլժի-Բարդուս-Կարառյան-Մծնկերտ ուղղությամբ: Նրանց դիմա-

կայում էր օսմանյան 11-րդ կորպուսը³⁹:

Երկօրյա կատաղի մարտերից հետո թուրքական 30-րդ և 31-րդ դիվիզիաները դուրս պրծան օղակումից: Գեներալ Կորսունի կարծիքով մարտական առաջադրանքը ձախողվեց Կովկասյան 1-ին Կապակային դիվիզիայի հրամանատար գեներալ Բարատովի մեղքով: Նա չկարողացավ կապմակերպել թշնամու հետապնդումը⁴⁰:

Քանի որ թուրքական 11-րդ կորպուսը դեռևս որոշակի վտանգ էր ներկայացնում, ոռուսական հրամանատարությունը վճռեց շարունակել նրա հետապնդումը: Հակառակորդի թիկունք ուղարկվեց մի զորացոլատ, որը 1915 թ. հունվարի 2-ի երեսոյան անապասելիութեն հարվածեց թուրքերին թիկունքից: Մարտերը և ապա թշնամու հետապնդումը շարունակվեցին մինչև 1915 թ. հունվարի 5-ը:

Այսպիսով, Սարիդամիջյան օվերայիան, նախաձեռնված Օսմանյան թուրքայի ռազմական նախարար Էնվեր փաշայի գլխավորությամբ, անփառունակ վախճան ունեցավ: Էնվերն ինքը հապիկ կարողացավ խուսափել գերլիցուց: Թուրքերը 90 հազար զինվորներից ու սպաներից կորցրեցին 78 հազարը: Ռուսները գրավեցին 13 դաշտային և 50 լեռնային թնդանոթ⁴¹: Նրանց կորուստը կապմում էր շուրջ 20 հազար ըսպանված, վիրավոր և յրտահար եղած⁴²:

³⁹ Թուրքական 11-րդ կորպուսի հրամանատարությունը, տեղակ շինելով 9-րդ և 10-րդ կորպուսների պարտությանը, շարունակում էր հարձակումը (տես ՀՀ ՊԿԱ, ֆ. 121, գ. 1, թ. 10, թ. 10):

⁴⁰ Տես Բրիգադի հրամանատար Ն. Կորսուն նշ. աշխ., էջ 125–126:

⁴¹ Տես Ա. Ճե-Լազար. Միրօյա իմպերալիստական война 1914–1918 թ. Մ., 1934, с. 132: Գերմանական բանակի սպա Ռաֆայլ դը Խովանսկը, որը գտնվում էր թուրքական ծառայության մեջ, իր հուշերում այլ թվեր է բերում. թուրքերը կորցրել են մոտ 30 հազար մարդ, ոռուսների ձեռքն է, անզել 15 դաշտային մարտկույթ: Նրա կարծիքով այդ օպերացիայի ընթացքում ոչնչացվեց օսմանյան լավագույն բանակը (տես R. de Nogales. Four Years beneath the Crescent. Transl. from the Spanish by M. Lee. With an introd. by Lieut.-Colonel E. Davis. N. Y., London, 1926, p. 25).

⁴² Տես նույն տեղում, էջ 142–143: Տես նաև՝ Ի. Խ. Բագրամյան. Մոи воспоминания. Ե., 1979, с. 22.

Ռուսներին հաջողվեց գերիշխող բնագըծներ գրավել նոր մարտական գործողությունների համար: Անդրկովմասի տարածքը, բայց ուժամբ Բայումի շրջանի մի փոքր տեղամասի, ամբողջությամբ ազատագրվեց: Ռուսները նշանակալից հաջորդությունների հասան նաև Պարսկատանում: Նրանք վերագրավեցին Թավրիզը: Ցավոր, Արևելյան ռազմաճակատում ռուսական զորքերի անհաջողությունները թույլ չտվեցին զարգացնել հականարձակումը:

Գեներալ Կորաւունի կարծիքով Սարդարիշյան օպերացիան շրջապատման մեջ գունդող զորքի պայքարի հազվագյուտ օրինակ է: Օպերացիան սկսվեց ռուսական ուժերի պաշտպանական գործողությամբ, ավարտվեց հանդիպական մարտով, թուրքական օդակման ճեղմամբ, հակառակորդի շրջապատմամբ ու հետապնդմամբ⁴³:

Ռազմական պատմաբանների գնահատմամբ օպերատիվ տեսակետից Էնվերի պանքը (Սարդարիշյանի շրջանում շրջապատել ու ջախչախել ռուսական զորքերը՝ շրջանցելով Կովկասյան բանակի գլխավոր ուժերի թերթից մեջը) տեսականորեն ճիշտ էր: Գործնականում, սակայն, Էնվերը, տուրք տալով քաղաքական նպատակներին, թույլ էր տվել քազմաթիվ կոպիտ մարտավարական սիամներ, որոնք ի վերջո օմանյան Յ-րդ բանակի պարտության պատճառ դարձն:

Այդ սխալներն էին.

1. Սարդարիշյան օպերացիայի արյանը գրեթե նույնությամբ կրկնում էր 1870 թ. ֆրանս-պրուսական պատերազմի ընթացքում պրուսացիների իրականացրած Սեղանի օպերացիան: Օսմանյան թուրքիայի ռազմական նախարարը, սակայն, հաշվի չէր առել ռազմական թատերաբեմերի՝ Սարդարիշյանի և Սեղանի ընակիմայական պայմանների տարբերությունը, հաղորդավայրության ուղիների վիճակը և լեռնային ռելիքները: Էնվերն իր օպերատիվ պլանը կազմել էր՝ հիմք

⁴³ Տես Բրիգադի իրամանատար Ն. Կորսուն, նշ. աշխ., էջ 54:

ունենալով իր կողունակությունը, որի էությունը հետևյալն էր. ապագա պատերազմը կլինի կայծականացնելու ու կարծատուն: Ուստի թուրքական բանակը պատրաստ չէր ծանր կլիմայական պայմաններում երկարատև մարտերի:

2. Թուրքական իրամանատարությունը կազմել էր միայն հարձակողական գործողությունների պլան:

3. Օսմանյան տեղագրական քարտեզներն ունեին լուրջ թերություններ և չին վերաբերում տեղանքի իրական պատկերը: Այսպես, թուրքական 1:200000 մասշտաբի ռազմական քարտեզի վրա Սարդարիշյանի քաղաքի տեղը նշված էր իրական տեղից 8 կմ արևելուորդ⁴⁴:

4. Թուրքական կորամասերի առաջնադաշտային գաղտնիությունը պետք է ապահովելու ռուսների համար «անհայտ» մի լեռնային ճանապարհի օգտագործմամբ, որը կոչվում էր Թոփի յու: Սակայն, գեռնև 1908 թ. Կովկասյան ռազմական օկրուզի գլխավոր շտաբի քարտեզագրական բաժինը իրապարակել էր այդ շրջանի տեղագրական քարտեզը, որտեղ նշված էր նաև Թոփի յուը՝ Թնդանոթի ճանապարհը⁴⁵:

5. Զորաշարժի արագությունն ապահովելու համար Էնվեր փաշան իրաժարվեց դաշտային հրետանու մեծ մասից և գումարկից: Օսմանյան բանակը իմբնականում սպառավիճակած էր լեռնային թնդանոթներով, որոնք փոքր տրամաչափի էին:

6. Խիստ անբավարար էր Յ-րդ բանակի համբարակային և բժշկասանիտարական սպասարկումը: Զորքն ապահոված չէր տաք հագուստով և բարձր կալորիականության սննդով: Եվ դա այն ունեաբում, եթե մարտական գործողությունը կատարված էր առաջնադաշտում:

⁴⁴ Տես Բրիգադի իրամանատար Ն. Կորսուն, նշ. աշխ., էջ 54:

⁴⁵ Տես ՈՒ. Է. Գ. Աղեն, Պ. Մուրասով, նշ. աշխ., էջ 253: Էրգումին գրավման օվերացիան իրականացնելիս ռուսները հաջորդությամբ օգտագործեցին Թոփի յուը իրենց գորամասերից մեկով Բյութիբրյուի պարանոցը իյուսիսից շրջանցելու համար (տե՛ս Կոմբրից Հ. Կորսոն. Էրզըրումսկան օպերացիա և Կավկազում 1915–1916 թվականներում. Մ., 1938, ս. 8, 81).

յուններն ընթանալու էին խստաշունչ ձմռանը: Բժշկական ծառայությունը չլկարողացավ կանխել պատճառ համաձարակային հիվանդությունները և զանգվածային ցրտահարությունը:

8. Թուրքական իրամանատարությանը չհաջողվեց ապահովել կայուն կապ 9-րդ, 10-րդ և 11-րդ կորպուսների միջև: Դա էր պատճառը, որ թուրքերը չկարողացան համաձայնեցված և միաժամանակյա գործողություններ վարել:

9. Խոր ձյան և սառնամանիքների պայմաններում մարտի նետվեց հեծելազորը, որ նպատակահարմար չէր:

10. Թուրքական սպայական և զինվորական կազմն իր ռազմական պատրաստականությամբ և զիտելիքներով զգալիորեն վիշտում էր ռուսներին:

Օսմանյան վիկած ուժերի մարտական պատրաստականության մասին ըսպանիշ տեղեկություններ է հաղորդում գեներալ Օ. Լիման ֆոն Զանդերսը՝ նրանով, որ թուրքական 3-րդ բանակն ի վիճակի չէր նման լայնածավալ գործողության: Դրա կարևոր պատճառներից նա առանձնացնում է բանակում տիրող համատարած կաշառակերությունը և ունեցածքի բացահայտ թալանը, գործող զորամասերում անհրաժեշտ հանդերձանքի ու պարենի պակասը, սանհատարաբժշկական ծառայության անբավարար աշխատանքը և այլն⁴⁶:

Թուրք ռազմագետ ուսումնասիրողները, Սարիդամիշյան օպերացիան գնահատելով որպես հանցագործություն, նրա ձախողման պատասխանատու են համարում Էնվեր փաշային⁴⁷:

Անգլիայի հետապոտողներ Վ. Ալենը և Պ. Մուլրատովն իրենց ուսումնասիրությունում այն նկարակացությանն են հանգում, որ Էնվերը կազմել էր ռուսական Կովկասյան բանակը շախչամելու մի այնպիսի ծրագիր, որն իր լայնածավարար աշխատանքը և այլն:

⁴⁶ Տես Շ. Սուլեյման Լիման ֆոն Զանդերս: «Ֆրոշակ», Փարիզ, 1929, էջ 177–179, Ղ. Փորձլուք. Արմենիա, 1915. Սունդուկություն կուլտурного народа. Ե., 1991, с. 25.

⁴⁷ Տես Կոմբրից Հ. Կորսոն. Սարկամանական օպերացիա ու կավականական գործություններ մասին. Արմենիա 1914–1915 թվականների մասին. Ե., 1991, ս. 145.

լությամբ շփոթմունքի մեջ էր գցում նույնիսկ գեներալ Լ. ֆոն Զանդերսին⁴⁸:

Ու դը Նոգալեսն իր հուշերում վըկայում է, որ 3-րդ բանակի շոարքի պետ, գերմանացի գեներալ Քրոնսարտ ֆոն



Էնվեր փաշա

(R. de Nogales. «Four Years beneath the Crescent» N. Y., London, 1926 գրքից)

Շեկնարքոֆը փորձել է Էնվեր փաշային հետ պահել ձմռային դաժան պայմաններում հարձակումից, սակայն ապարդյուն: Խնչանք հեգնանքով նշում է Ու. դը Նոգալեսը, 3-րդ բանակը պարտվեց Էնվեր փաշայի փառահիրության պատճառով: Էնվերը «փորձում էր Նապոլեոն խալար»⁴⁹:

Ինքնին հասկանալի է, որ կայսերական Գերմանիայի հմուտ և բազմագույն բարձրաստիճան սպաները չեն կարող չնկատել Էնվերի օպերատիվ պանի անկատար և թերի լինելը, ինչի պատճառով օպերացիան պետք է ավարտվեր ձախողմամբ: Նրանց առաջարկությունը՝ մարտը չընդունել և նահանջել Սպազ, ավելի

⁴⁸ Տես Ռ. Է. Վ. Ալեն, Պ. Մուլրատով, ս. աշխ., էջ 250:

⁴⁹ Ու. դը Նոգալես, նշ. աշխ., էջ 25:

ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՅԱՆ ՀԱԶՄԱՆԱԿԱՏՈԽՄ. ՍԱՐԻԴԱՄԻՇՅԱՆ ՕՊԵՐԱՑԻԱ

իրատեսական էր, սակայն Էնվերը չընդունեց այդ առաջարկությունը: Նա, թե՛վագործած պանթուրքիստական սին գաղափարներով, ոչ այնքան ռազմական, որքան քաղաքական նպատակներով տողորված, վճռեց իրականացնել իր ծրագիրը: Ի վերջո գերմանացիները տեղի

հաղորդում է. «Այս տարվա հունվարին ծանր կորուստներից հետո (սարիդամիշյան աղետից հետո—Ռ. Ռ.) մասնակորապես Երպումում, ապայական (թուրքական—Ռ. Ռ.) շրջանները տրամադրված են գերմանացիների դեմ՝ նրանց մեղադրելով այն բանում, որ նրանք թուր-



Գերմանացի գեներալ Է. Ֆոն Ֆալկենբայենը հրահանգներ է տալիս թուրքական գորքին
(R. de Nogales. «Four Years beneath the Crescent» N. Y., London, 1926 գրքից)

տվեցին: Նրանց համար կարևոր ոչ այնքան օսմանյան կորքի հաղթանակն էր, որքան թուրքիայի մասնակցությունը պատերազմին: Դա կհարկադրեր ռուսաներին կռվելու երկու ճակատով և լրացրացից ուժեր պահելու Կովկասում՝ դըրանք չունափոխելով Արևելյան ռազմաճակատ: Բայց դրանից, պատերազմի մեջ մտնելով, թուրքերը կիֆակենին նեղուցները և թույլ չէին տա ռուսաներին ստանալ ռազմավարական հումք, զենք և պյուն⁵⁰:

Սարիդամիշյան պարտությունից հետո թուրքական ռազմական շրջանները սկսեցին անհաջողության մեջ մեղադրել գերմանացիներին: Տրավիլում ավատրություն նպարական հյուպատոս Էռնեստ Կվիտլուվսկին 1915 թ. հունիսի 12-ին

⁵⁰ Տե՛ս Ռ. Գ. Սևակյան, Ցեղասպանության պատմությունը: Ե., 1990, էջ 57:

դիային անբավարար էին նախապատրաստել պատերազմին»⁵¹:

Ճողովրելով մարտադաշտից և վերադառնալով Վ. Պոլիս՝ Էնվերը իրամայից գաղտնի պահել Սարիդամիշյան օպերացիայի ձախողությունը: Պաշտոնական հաղորդագրություններում 3-րդ բանակի պարտությունը ներկայացվեց իրու տեղական նշանակության անհաջողություն: Թուրքիայում ավստրոհունգարական վինդուրական կյորդ Յովեկ Պոմիանկովսկին իր հուշերում վկայում է, որ «որևէ լուրի հրապարակումը մամուլում, անզամ խոսեն այդ մասին արգելված էր»⁵²: Իսկ դր Նոգալեսն իր հուշե-

⁵¹ Տե՛ս «The Armenian Genocide». Volume 2. (Vorwort von A. Ohandjanian und Univ. Prof. V. Bihl). München, 1988, S. 190.

⁵² Տե՛ս Ա. Օհանջանյան, Աշ. աշխ., էջ 86:

րում նշում է, որ 3-րդ բանակի կործանումը օսմանյան տեղեկագրերում նույնիսկ ներկայացվում էր որպես Ենվերի տարած հաղթանակ, ասփում էր, որ «ուսւները գլխովին ջախչախվել են»⁵³:

Սարիդամիշում կրած պարտությունը բարոյալքող ազդեցություն ունեցավ և զցեց թուրքական իշխանությունների վարկը կայսրության բնակչության աշքում: Օրինակ, Մուշում համարքած քրոդական ջոկատները, իմանալով այդ պարտության մասին, արագորեն ցըրվեցին⁵⁴:

Կարճ ժամանակ անց թուրքական պաշտոնական շրջանները և պատմարանները միախին մեղադրել հայերին, որոնք իր իրենց հակակառափարական գործողություններով պատճառ էին դարձել սարիդամիշյան աղետին: Թուրք պատմարան դոկտոր Զենգիկ Քյուրշաթը համոզված պնդում էր. «Հայկական ապատամբությունների շնորհիվ ոռուական յուրաքանչյուր գործողություն հասնում էր նպատակին»⁵⁵: Իսկ նրա ավագ գործընկեր Էսադ Ուրասը կրնկեն նրանում է «ուսւների դրդմամբ» հայերի կատարած գործողությունները.

1. Զենքով ու զինամթերքով դասալքությունը թուրքական բանակից,

2. Անընդհատ հարձակումներով ու թալանով իրադրության ապակայունացումը և թիկունքում խուճապի առաջացնումը, որով հայերը թուրք զինվորներին հարկադրում էին դասալքել և իրենց բնակավայրերը վերադառնալ,

3. Մարտավան գործողություններն ավագելուն պիսա թիկունքից հարձակումներն օսմանյան բանակի վրա,

4. Ուսւների կողմը իբրև կամավորներ անցնելը,

5. Լրտեսությունը,

6. Հարձակումները զինամթերք և պարեն տեղափոխող զինվորական ստորաբաժնումների վրա,

⁵³ Ռ. դը Նոգալես, նշ. աշխ., էջ 28:

⁵⁴ Տես Վ. Փափազյան, Խմ հուշերը, հ. 2: Բնյութ, 1952, էջ 327:

⁵⁵ C. Cursat. Armenian Terror (ուս հևալայ գրում) E. Uras. The Armenians in History and Armenian Question. Istanbul, 1988, p. 125.

7. Պարենի և սեփական տների ունչացումը⁵⁶:

Անգիասի պատմարան դոկտոր Բ. ՈՒնկերը, անդրադառնալով Չ. Քյուրշաթի ու Է. Ուրասի և նրանց գործընկերների ամբատանություններին, գրում է, որ թուրք պատմարանները կենծում են: Վկայակոչելով Օսմանյան թուրքիայում բրիտանական դեսպանի այն հիշատակությունը, որ Բայկանյան պատերազմում մարտական գործողություններին օսմանյան բանակի կազմում մարտնչում էին 8000 օսմանահպատակ հայեր, դեսպանը պնդում է, որ նրանք «կովում էին ավելի լավ, քան մյուս այլազգիներ»: Բ. ՈՒնկերը, հիմնը վելով իր ուսումնասիրության արդյունքների վրա, եվրակացնում է, որ 3-րդ բանակը պարտություն կրեց միայն ու միայն Ենվեր փաշայի գործած սիալների պատճառով⁵⁷:

Մենք կառանձնացնենք ևս մի կարևոր պատճառ. Ենվեր փաշան օսմանյան զինված ուժերից հեռացրել էր բարձրաստիճան 1500 սպաների, որոնց բարձրական հայացըները չեն համընկնում երիտրուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցության բարոված գաղափարներին: Հեռացված ըսպաներին փոխարինում էին նույնիսկ բաղարացիական անձեր: Այսինք, Մուշում տեղակայված 34-րդ դիվիզիայի իրամանատարն էր բժիշկ, երիտրուրքական կուսակցության գործիչ Բեհաէդիին Շաքիր բեյը⁵⁸.

Սարիդամիշյան օպերացիային անդրադառնալով՝ ՈՒ. Զերշիլը նրա ձեռնարկումն անխոհեմություն էր համարում, քանի որ նրան չեն նպատառում ո՛չ եղանակը և ո՛չ էլ տեղանքը⁵⁹:

Ուսւական կողմն ուներ հետևյալ առավելությունները.

1. Ուսւների թիկունքում կար հա-

⁵⁶ Տես Է. Ուրաս, նշ. աշխ., էջ 855:

⁵⁷ Տես Բ. ՈՒնկերի գրախոսությունը Է. Ուրասի հիշալ գրքի մասին: The Royal Asiatic Society. London, 1990, N 1, pp. 168, 190.

⁵⁸ Տես Chr. Walker. Armenia: Survival of a Nation. N. Y., 1980, p. 200.

⁵⁹ Տես W. Churchill. The World Crises. London, 1931, pp. 255–256.



Հայկական զորախումբը անցնում է Թուրքիայի սահմանը
(ՀՀ Ազգային ֆիլմաֆոտոդարանից, Փ. 26724)

դրդակցության ուղիների համեմատաբար զարգացած ցանց՝ երկաթուղի և խըճուղային ճանապարհները: Դա հնարավորություն տվեց Սարիղամիշյան օվերացիայի ամենաեռուն և վճռական փուլում ապահովելու անհրաժեշտ պահեստավորի ու ռազմական հանդերձանքի ստացումը:

2. Ռուսական տեղագրական բարտեպներն ավելի ստուգ և մանրամասն էին պատկերում տեղանքը:

3. Ռուսական բարձրաստիճանն ըստայական կազմի պրոֆեսիոնալ բարձր պատրաստականությունը թույլ տվեց կարծ ժամանակահատվածում կազմել օվերատիվ պահ և այն հաջողությամբ իրագործել:

4. Ռուսական բանակի պայական ու վիճակության անձնակազմն իր մարտական պատրաստականությամբ գերազանցում էր հակառակորդին:

Այսիսով, օսմանյան զորքի կողմից ձեռնարկված Սարիղամիշյան օվերացիայի ընթացքում ռուսական Կովկասյան բանակը ոչ միայն կարողացավ մար-

տական բարդ իրադրությունում, ինտ մըղելով հակառակորդին, դուրս գալ շրջապատումից, այլև օրակի մեջ առնել թուրքական կորպուսներից մեկը և գլխովին ջախչախել այն:

Սարիղամիշյան օվերացիան կարելով նշանակություն ունեցավ ոչ միայն Ռուսաստանի, այլև Աստանայի երկրների համար: Թուրքական իրամանատարությունը ստիպված էր այլ ռազմաձականներից լրացուցիչ ուժեր տեղափոխել Կովկասյան ճակատ: Դա բավականին թեթևացրեց Սիցագետքում գործող բրիտանական բանակի դրությունը և նպաստեց Սուեզի շրանցքի պաշտպանությանը⁶⁰.

Սարիղամիշի օվերացիան հարցստացրեց ոչ միայն ռուսական, այլև համաշխարհային ռազմական արվեստը: Այդ օվերացիայի փորձի օգտագործումը, մեր կարծիքով, կարելի է նկատել 1941—1945 թթ. խորհրդագերմանական պատերազմի տարիներին իրականացված Ստալինգրադյան օվերացիայում:

⁶⁰Տե՛ս Ա. Դե-Լազարի, Խ2, աշխ., Լ2:

ВОЕННАЯ ИСТОРИЯ

АРМЯНСКИЙ ЛЕГИОН В СВЕТЕ ИСТОРИЧЕСКИХ, ПРАВОВЫХ И ПОЛИТИЧЕСКИХ ВОПРОСОВ

А. А. ГАРАМАНУКЯН, генерал-лейтенант, доктор юридических наук*

РЕЗЮМЕ

Явление добровольного вступления иностранцев в национальные армии разных стран, получившее широкое распространение в годы первой мировой войны (1914—1918 гг.), стало примечательным в связи с созданием различных частей и подразделений, состоявших из иностранцев одной национальности. Оно объясняется стремлением народов принять участие в войне против своих поработителей с целью ускорения процесса своего национального освобождения в результате поражения поработившей их страны.

В данной статье речь идет о Восточном (Армянском) легионе, представляющем особый интерес в связи с возникшими при этом обстоятельствами юридического и политического характера.

В ноябре 1914 г. Турция вступила в войну на стороне центрально-европейских империй. Турецкое правительство намеревалось воспользоваться создавшимся положением, когда общественное мнение в Европе уделяло внимание преимущественно разразившейся войне, и завершить осуществление своих планов по полному уничтожению находившихся под господством Турции армян. Более полутора миллионов армян подверглись резне в течение 1915—1918 гг. Армяне, где это было возможно, попытались имеющимися в их распоряжении скучными средствами организовать сопротивление турецким регулярным частям и башибузукам, но почти всюду потерпели поражение. Одним из немногочисленных районов, где армяне спаслись, был Мусагаг, или Джебель-Муса, в северной Сирии, недалеко от Александрийского (Искандерунского) залива. Защитники Муса-гага были на французских кораблях вывезены в Порт-Саид, и все, кто был в состоянии держать оружие, выразили желание вступить в ряды французской армии для борьбы против турецких погромщиков.

*Французское правительство тянуло с решением вопроса о создании армянской национальной части в составе своих войск. Англичане, под чьим покровительством в то время находился Египет, пытались завербовать армян в свои войска, однако армяне хотели вступить лишь во французскую армию. Вопрос решился в 1916 г., когда Англия и Франция пришли к согласию относительно своей политики на Среднем Востоке, закрепленному так называемым соглашением Сайкса—Пико. В октябре того же года в Лондоне на переговорах Сайкса и Пико с руководителем армянской национальной делегации Погосом Нубар-пашой было достигнуто соглашение о создании в составе французских войск армянской национальной части**. С целью уберечь оставшихся на территории Турции армян от турецкого «возмездия» она*

* Генерал-лейтенант сирийской армии Арам Гараманукян (1910 г. рожд.) в 1972 г. в Париже защитил диссертацию на соискание ученой степени доктора права по теме "Иностранцы и военная служба", публикуемая глава из которой в 1974 г. была напечатана в 5-ом томе «Армянского арменоведческого журнала», издаваемого в Бейруте на армянском языке. Ред.

** Об истории Армянского легиона более подробно см. «Աշխարհի բնակչություն», 1996 г., N 1. Ред.

была названа Восточным легионом. С той же целью вместо слова «армяне» было употреблено выражение «добровольцы османского происхождения». Численность состава не была установлена, однако во втором пункте приказа военного ведомства Франции о создании легиона указывалось, что «число взводов должно соответствовать взятым обязательствам». Вскоре стали прибывать добровольцы из США, Франции, Египта и других стран. В состав легиона были включены и военнопленные армяне из турецкой армии. Из них были сформированы три батальона (позднее — и четвертый), к которым была добавлена рота из сирийских арабов.

За участие в боевых действиях на сирийско-палестинском фронте и по освобождению Киликии армянам была обещана автономия Киликии под покровительством Франции, а легион должен был стать ядром будущей киликийской армии.

Легион особо отличился в сражении в районе горы Аара, а также при освобождении Киликии. В 1918 г. Восточный легион был преобразован в два легиона — Армянский и Сирийский. В сентябре 1920 г. в результате англо-французского соперничества на Среднем Востоке и изменения французской ориентации относительно кемалистской Турции Киликия была возвращена последней, а Армянский легион был распущен. Это дало возможность туркам организовать во многих городах Киликии массовую резню армян.

Сформирование Армянского легиона создало множество проблем правового характера.

В первую очередь возник вопрос о правомочности с точки зрения международного права создания Францией воинской части из подданных государства, с которым она находилась в состоянии войны. На этот вопрос можно дать положительный ответ, так как в истории войн существовал обычай формирования частей из подданных противоборствующей стороны, особенно в период революционных или освободительных войн. Правда, заключительная часть 23-й статьи 4-ой Гаагской конвенции, подписанной 18 октября 1907 г., указывала на недопустимость насильственного использования одной стороной подданных другой стороны в войне против нее. Однако в данном случае участие турецкоподданных армян и сирийцев было добровольным, к тому же их подданство не скрывалось.

Однако создание Восточного легиона возбудило некоторые вопросы с точки зрения внутреннего законодательства Франции. Дело в том, что 3-я статья Закона о воинской повинности от 21 марта 1905 г. разрешала использование иностранцев только в составе иностранных легионов и сроком на 5 лет. Указом от 3 августа 1914 г. срок использования был распространен на все время войны. 16 августа 1915 г. был принят закон, запрещавший на все время войны и на всей территории Франции использование подданных тех стран, которые воевали против Франции или ее союзников. Заметим, что этот закон не мог распространяться на армян Порт-Саига и освобожденных военнопленных в Египте, так как это не была территория Франции. Прибывавшие же в Марсель и Бордо добровольцы из США и других стран с выходом на сушу теряли право вступать во французскую армию. Кажется, что французское правительство умышленно обошло это препятствие, включив их в состав армии в качестве «вспомогательных». Трудно сказать, что обозначало это слово, так как оно не было употреблено в общепринятом смысле — вспомогательная служба из-за инвалидности.

Однако подобная квалификация создала определенные трудности в вопросе статуса легионеров. Согласно инструкции N 7966 – 9/11 от 26 ноября 1916 г., легионеры-добровольцы, в каком бы звании они ни были, не считались равными ни французским военным, ни включенным в состав французской армии иностранцам, но имели право занимать посты вплоть до командира взвода. Несуразность подобного указания вскоре стала очевидной, и в мае 1918 г. в эту инструкцию была внесена поправка, по которой легионеры приравнивались в правах к французским и иностранным военнослужащим, имеющим то же звание, но с той оговоркой, что при равенстве в званиях право командования всегда должно принадлежать французским военнослужащим.

В инструкции N 7966 – 9/11 указывалось также, что поскольку легионеры являются «вспомогательными» военнослужащими и не включены в состав армии, то не имеют тех прав и привилегий, которыми обладают военнослужащие французской армии. В частности, не положены были им пенсии после демобилизации, пенсии их вдовам и сиротам, а также выделения в помощь их нуждающимся семьям.

По этой же инструкции договор мог быть расторгнут со стороны команда легиона в случае невозможности исполнения легионером своих обязанностей по физическому состоянию, а также из-за нарушения дисциплины. Последнее обстоятельство создавало возможности для всяческих нарушений законности со стороны командиров. Договор мог быть расторгнут также вследствие распуска легиона. Таким образом, легионеры фактически не имели никаких прав по отношению к Франции, за которую проливали свою кровь.

Что касается политических вопросов, то они сыграли важную роль как при создании легиона, о чем уже говорилось, так и в процессе его деятельности и при распуске. На судьбе легиона сказалось все более углубляющееся соперничество между Францией и Англией. Английское командование неоднократно требовало от французского командования распуска легиона или его переброски в Марокко, хотя последнее требование противоречило пунктам первоначального соглашения о создании легиона, который должен был сражаться только против Турции. Легион был распущен в сентябре 1920 г., и причиной этому послужило нежелание Франции содержать в Киликии армянское национальное формирование, являвшееся препятствием на пути осуществления Францией серьезных уступок Турции, которые также резко противоречили тройственному соглашению, заключенному в Лондоне в 1916 г.

Итак, история легиона является еще одним свидетельством того, что очень часто политика берет верх над правом.

БОЕВЫЕ ДЕЙСТВИЯ НА КАВКАЗСКОМ ФРОНТЕ В 1914 Г. САРЫКАМЫШСКАЯ ОПЕРАЦИЯ

Р. О. СААКЯН, майор, кандидат исторических наук

РЕЗЮМЕ

Боевые действия на Кавказском фронте начались 1 ноября 1914 г. встречными боями в районе Кеприкея. Из находившихся под ружьем 800 тысяч человек турецкое командование направило на Кавказский фронт 3-ю армию, ко-

торая насчитывала 300 тысяч солдат и офицеров и состояла из 9-го, 10-го и 11-го армейских корпусов, двух кавалерийских, четырех с половиной кургских и двух пехотных дивизий. Им противостояли войска Кавказского военного округа в количестве 153 батальонов, 175 сотен, 350 полевых пушек и 5 батальонов крепостной артиллерии. В состав русских войск первоначально были включены четыре армянские добровольческие дружины под командованием Андраника (Андраник Озанян), Амазаспа (Амазасп Срванցян), Дро (Драстамат Канаян) и Кери (Аршак Гафавян).

Еще до начала боевых действий командование Кавказского военного округа создало пять групп, состоявших из отдельных отрядов. В главную — Сарыкамышскую — группу входили три отряда: Сарыкамышский, Ольтинский и Кагызманский. Вторую группу составили Эриванский, Макинский и Азербайджанский, третью (Батумскую) — Батумский и Чорохский отряды. Четвертой группе была поручена охрана шоссейной дороги Энзели — Тегеран и пограничных линий на персидской границе. Пятая группа являлась резервной и охраняла тылы фронта.

Турецкое командование при участии военных специалистов из Германии (генерал Лиман фон Зандерс и др.) составило план разгрома главных сил русских войск. По этому плану турецкие войска должны были атаковать правый фланг Сарыкамышской группы и, сковывая действия с фронта, выйти ей в тыл и окружить. Турки рассчитывали после овладения городом Сарыкамыш развить свой успех и овладеть Закавказьем, а затем и всем Кавказом. В оперативном плане турок особое место отводилось русскому подданному мусульманскому населению региона, которое должно было поднять мятеж в тылу русских и тем самым способствовать успешному продвижению турецких войск.

По плану русского командования русские войска должны были активными боевыми действиями обеспечить защиту двух главных коммуникаций, соединяющих Закавказье с европейской частью России, — железную дорогу Баку — Владикавказ и Военно-грузинскую дорогу, а также Баку.

1 ноября 1914 г. началось наступление русских войск, осуществляющееся силами Ольтинского, Сарыкамышского и Эриванского отрядов. Сарыкамышский отряд под командованием генерала Г. Э. Берхмана овладел Кеприкеем (в 35 км от Эрзерума). Однако наступление русских не было достаточно подкреплено в оперативном отношении. Поэтому наступление 9-го и 11-го армейских корпусов противника вынудило их 16 ноября 1914 г. отступить на исходные позиции. Этот тактический успех вдохновил турецкое командование на продолжение наступления, которое сопровождалось общим восстанием русскоподданных мусульман в Карской и южной части Батумской областей.

На Батумском направлении турки высадили десант и при поддержке других воинских частей заняли Артвин, Ардануч и Ардаган. В итоге к 9 декабря 1914 г. правый фланг Кавказской армии был отброшен почти до Батума.

В конце ноября 1914 г. военный министр Турции Энвер-паша отстранил от командования 3-й армией Хасана Иззет-пашу, выразившего несогласие с его планами, и лично возглавил эту армию. Он приказал организовать наступление на Сарыкамышскую группу, обойти ее своим левым флангом и окружить. По его приказу 9-й корпус начал наступление в направлении Бар-

гиз — Сарыкамыш, а 10-й корпус — левее, с выходом в район севернее Сарыкамыши. 11-й корпус остался на своих позициях и должен был активными действиями приковывать к себе внимание русских.

С 14 по 22 декабря 1914 г. турецкие войска силами 9-го и 10-го корпусов пытались совершить совместный обходный маневр в районе Сарыкамыши. Ценой больших потерь им удалось 15 декабря захватить железнодорожный вокзал в Сарыкамыше, участок железной дороги Сарыкамыш — Карс и вступить на окраины города. Однако русские войска под руководством генерала Юденича сумели пресечь этот маневр и, подтянув резервы, перейти в контрнаступление. Они разбили 9-й корпус, а его остатки были окружены в районе северо-западнее Сарыкамыши. 10-му корпусу удалось выйти из боя и отступить. Русские до 30 декабря продолжали преследование отступавших частей противника.

Вскоре были разгромлены турецкие войска и у Ардагана. Таким образом, к 5 января 1915 г. на Сарыкамышском и Ольтинском направлениях турецкие войска, понеся огромные потери, были отброшены на исходные позиции, с которых начали осуществление операции «Сарыкамыш».

В ходе Сарыкамышского сражения русские войска потеряли свыше 20000 человек убитыми, ранеными и обмороженными, в то время как у турок из 90 тысяч солдат и офицеров спаслись всего 12000 человек.

По мнению участника Сарыкамышского сражения, военного историка генерала Н. Корсуня, Сарыкамышская операция представляет пример довольно редкого образца борьбы против окружения — борьбы, которая началась в обстановке обороны русских и закончилась в условиях встречного столкновения с разжатием кольца окружения изнутри и преследованием обходного крыла турок.

Следует отметить, что победа русских войск под Сарыкамышем значительно облегчила действия союзных войск в Месопотамии и по обороне Сүзукского канала.

Таким образом, русские войска в трудных условиях окружения не только сумели отразить наступление турецких войск, но и, перейдя в контрнаступление, взять в кольцо и разгромить части турецкой армии.

Сарыкамышская операция обогатила не только русское, но и мировое военное искусство. По нашему мнению, ее элементы были использованы позднее в Сталинградской операции второй мировой войны.

В статье приводится военно-исторический анализ причин поражения турок и победы русских войск.

MILITARY HISTORY

THE ARMENIAN LEGION IN THE LIGHT OF HISTORICAL, LEGAL AND POLITICAL ISSUES

A. H. GARAMANOUKIAN, Lieutenant-General, Doctor of Laws*

SUMMARY

The voluntarily entry of foreigners into national armies of different countries -- a widespread practice during the First World War (1914-1918) -- became a generalized phenomenon through the creation of different units and detachments of foreigners having the same national origin. It may be explained by the goal of belligerents to accelerate the national liberation of minorities living under the rule of antagonist governments through the defeat of the enemy.

In this article we will talk about the Eastern (Armenian) Legion, which is very interesting because of the appearance of circumstances having a legal and political nature.

Turkey began the war on the side of Central European Empires (the Central Powers) in November 1914. The Turkish government intended to use this opportunity to finish the implementation of their plans for the annihilation of Armenians living under Turkish rule while public opinion in Europe would be more concerned with the War.

More than one and half of million Armenians were slaughtered between 1915-1918. The Armenians, where possible, tried with the scanty means at their disposal, to organize a resistance to the Turkish regular armed forces and the Bashibuzuks. More often than not, the Armenians were defeated. One of the rare regions where Armenians were saved, was Moussa-Dagh or Jebel-Moussa in Northern Syria, not far from the Gulf of Alexandretta. The defenders of Moussa-Dagh were taken to Port Said by French warships. All those who were able to fight, wished to enter the French Army to fight against the Turkish authors of the pogroms.

*The French Government's decision regarding the creation of an Armenian national unit within their forces was delayed. The British who were the patrons of Egypt at the time, tried to recruit Armenians, but Armenians wanted to enter only the French forces. This problem was solved in 1916, when Britain and France had agreed their policy in the Middle East, confirmed by the so-called Sykes-Picot Agreement. During the negotiations between Sykes and Picot and the head of the Armenian national delegation, Boghos Nubar-Pasha, agreement was reached on the creation of an Armenian national unit within the French Army in October of the same year**. To protect the Armenians in Turkey from Turkish retribution, the unit was named the Eastern Legion. For the same reason, the formula «volunteers of Ottoman birth» rather than «Armenian» was used. The complement of the unit was not established. In item 2 of the Order of the Military Department of France, however, it was mentioned that the number of platoons had to be appropriate for the assigned duties. Soon, volunteers from the USA, France, Egypt and other countries arrived. Prisoners of War from the Turkish army were allocated to the Legion. They formed three battalions to which was added a fourth. A company of Syrian Arabs was added to these battalions.*

For their participation in combat activities in the Syrian-Palestinian theater of war, after the liberation of Cilicia, the autonomy of Cilicia under French protection was promised to Armenians. The Legion was to become the core of the future Cilician Army.

* Lieutenant-General of the Syrian Armed Forces, Aram H. Garamanoukian, was born in 1910. In 1972, in Paris, he was awarded his Doctor of Laws degree. His thesis was Foreigners and Military Service. One chapter of this study was printed in the 1974 (volume 5) issue of the Journal of Armenian Armenology printed in Beirut (Lebanon). The article is in Armenian. Ed.

** For more details on the Armenian Legion, please refer to «Հայկական բանակ», 1996, volume 1. Ed.

